Բաժանորդագին ԿԱՆԽԻԿ Թուրքիոյ համար տարեկան 50 ղրշ., Ռուսիոյ համար 5 ռուբլի. ուրիշ երկիրներու համար 12 ֆր։
Վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդագրութիւնք եւս կ'ընդունուին։
Գաւառներէն Օսմանեան նամակագրոշմ կ'ընդունուի՝ 1 ղրշ.-նոցը 34 փարայի հաշուով, կամ 100 ղրուշի փոխարէն 115 ղրշ։
ԾԱՂԻԿի վերաբերեալ ամէն գործի համար դիմել
Առ Տնօրէն-Հրատարակիչ
ՅՈՎՆԱՆ Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ
Պոլիս, Պահչէ-Գաբու, Թաշ խան, թիւ 50

ԾԱՂԻԿ

ԼՐԱԳԻՐ

درعليه‌ده بغچه قپوسنده طاش خانده
٥٠ نومروده « زاغيك » غزتەسى مديرى
پالاقاشيان حوونان

S'adresser à
HOVNAN PALACACHIAN
Directeur du journal arménien «Dzaghik»
Rue Bahtché-Kapou, Tach Han, 50
CONSTANTINOPLE

40 փարա — Ազգային, Քաղաքական եւ Գրական — 40 փարա

ՆՈՐ ՇՐՋԱՆ — Բ. ՏԱՐԻ. ԹԻՒ 15 — ՇԱԲԱԹ — 25 ՅՈՒՆՈՒԱՐ 1892

ԳՐԱՍԵՆԵԱԿ

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ

ԾԱՂԻԿի Տնօրէնութիւնը պատիւ ունի ծանուցանել իւր ընթերցողաց թէ, գոհացումն տալու համար այն խնդրանաց զորս յաճախ կ'ընդունի, հաստատած է Յանձնակատարութեան Գրասենեակ *մը։*

Յանձնակատարութեան Գրասենեակը *կը հայթայթէ մեծ և փոքր քանակութեամբ ամէն տեսակ ապրանք թէ՛ Պոլսոյ և թէ՛ եւրոպական հրապարակներէն գնելի, ինչպէս, դերք ամէն լեզուաւ, պատկերք, ձայնագրութիւնք, դպրոցական և գրասենեկի պիտոյք, ժամացուցի, տպարանական և այլ արհեստական գործիք, կտաւեղէնք, ասուեղէնք, ըմպելիք, անուշահոտութիւնք, կահ կարասիք, և այլն, և այլն։*

Վճարմունք կանխիկ են, բայց ի հարկին կարելի է պայմանաժամու եւս գործել այն տանց հետ որ կը ընտրեն արտադրիչներն ապահովել։ Փոխադրութեան ծախք կը պատկանին յաճախորդաց։

Յանձնակատարութեան Գրասենեակը *կ'ստանձնէ նաեւ վաճառումն ներքին բերքերու թէ՛ Պոլսոյ և թէ՛ օտար հրապարակաց վրայ։ Առ այդ կը բաւէ դրկել վաճառելի ապրանաց նմոյշները։*

Յանձնակատարութեան Գրասենեակը *կը փափագի ունենալ թղթակիցներ գաւառական քաղաքներու մէջ։*

Թղթակցութիւնք պէտք է ուղղուին առ Յ. Գ. Փալագաշեան, Կ. Պոլիս, Պահչէ գաբու, Թաշ խան, թիւ. 50։

FRATELLI GOLDENBERG

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ, ԱՄԵՆԷՆ ՀԻՆ, ԱՄԵՆԷՆ ՀԱՄԲԱՒԱՒՈՐ

ՀԱՆԴԵՐՁԵՂԻՆԱՑ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՐԱԾԱՆՕԹ ՀԱՄԱՑՆ ԵՒՐՈՊ. ԹՈՒՐՔԻՈՅ, ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐՔԻՈՅ ԵՒ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ

ՖՐԱԹԷԼԼԻ ԿՈԼՏԷՆՊԵՐԿԻ

Այս վաճառատուն կը յանձնարարուի հասարակութեան և ամէն մրցման կրնայ դիմադրել իւր կերպասուց ընտիր յատկութեամբը, պատրաստութեան տոկունութեամբը, ինչպէս նաեւ հանդերձին գեղեցիկ կտրուածքովը։

ԳԼԽԱՒՈՐ ՄԹԵՐԱՆՈՑՔ Ի Կ. ՊՈԼԻՍ

Թիւնէլի քով Թիւ 2, եւ Քարաքէոյի Կամուրջին գլուխը Թիւ 28

ՄԵԾԱԲԱՆԱԿ ԵՒ ՓՈՔՐԱԲԱՆԱԿ ՎԱՃԱՌՈՒՄՆ

ՄԱՍՆԱՃԻՒՂՔ

Հռոտոս, Քավալլա, Ռուսճուք, Զմիւռնիա, Վառնա, Պուրկաս, Փիլիպէ, Բոր-Սախտ, Սելանիկ, Սամսոն, Մերսին, Քիոս, Թարսուս, Ատանա, Պէյրութ, Դամասկոս, Տրիպոլիս (Սուրիական), Եաֆա, Աքեա, Ալեքսանդրիա, Գահիրէ, և այլն, և այլն։

PAPETERIES DE VIDALON

ԹՂԹԵՂԻՆԱՑ

ՄԵԾ ԳՈՐԾԱՏՈՒՆ ՎԻՏԱԼՈՆԻ

Հիմնեալ 1597 ին ի Փարիզ, Բալէսթրօ փողոց, Թիւ 39

Դրամագլուխ 3,150,000 *Ֆրանք։*

Կ'արտադրէ տարին 3,000,000 քիլոկրամէն աւելի

Ներկայացուցիչ Հէնրի Ժարտօն, Պարնաթան Խան

Դրասենեկի և տպագրական զանազան տեսակ ընտիր թուղթեր, գծագրութեան թուղթ սպիտակ և զանազան գոյներով, ծծուն թուղթեր, զանազան տեսակ սուսուրաթղթեր (մուխավա), լուսանկարչական թուղթեր, մագաղաթանման թուղթեր, նամակաց պահարաններ, և այլն, և այլն։

«ԾԱՂԻԿ» կը տպագրուի Վիտալոնի գործատան մէջ պատրաստուած թուղթի վրայ։ — Մանրամասն տեղեկութեանց և յանձնարարութեանց համար դիմել «ԾԱՂԻԿ»ի Խմբագրատունը։

11—20

MAISON PHÉNIX

Բերա, Բասաժ տիւ Թիւնէլ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Շապկեղինաց, ձերմակեղինաց եւ Բրդեղինաց

Վաճառատունս կը յայտարարէ իւր բազմաթիւ յաճախորդաց թէ, Նանսիի և Բիւմպէրկի ուշխարհածանօթ գործատուներէն ի նորոյ ստացած է մեծ քանակութեամբ՝ վերջին նորաձեւութեանց համաձայն շինուած՝ արանց, կանանց և մանկանց համար պատրաստ հագուստեղէններ, օժիտի համար բազմատեսակ ձերմակեղէններ, կնունքի համար մանկանց զգեստներ և այլ ամէն տեսակ ապրանքներ։

ԱՐԱՆՑ ՀԱՄԱՐ·		ԴՐՇ·
Շապիկ կտաւեայ · · · · · · · · · · · · · · · · · ·	հատը	14 ֆն 47 ½
» գունաւոր տպածոյ · · · · · · · · · · · · · · · ·	»	10 ֆն 28
» Ֆանէլա ·	»	21 ֆն 42
» դիշերանոց · · · · · · · · · · · · · · · · · · ·	»	12 ֆն 27
Անդրավարտիկ · · · · · · · · · · · · · · · · · · ·	»	10 ֆն 21
» մատամբոլ · · · · · · · · · · · · · · · · · · ·	»	15 ֆն 22
Օձիք կտաւեայ · · · · · · · · · · · · · · · · · ·	տուզինան	17 ֆն 54
Թեւնոց » ·	»	29 ֆն 65
Թաշկինակ այլ և այլ տեսակ · · · · · · · · · · · · ·	»	14 ֆն 135
Գուլպաներ՝ Ֆիլ ա'էքոս, բամպակեայ, մետաքսեայ, բրդեայ ·		29 ֆն 145
Փողկապ այլ և այլ տեսակ · · · · · · · · · · · · ·	տուզինան	3 ֆն 195

ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ·		ԴՐՇ·
Շապիկ՝ լաւ տպածոյ, դիմացկուն, պրոտրբիով · · · · ·	հատը	15 ֆն 27
» » » » տանթելայով · · · ·	»	18 ֆն 31
Վարտիկ » » » » · · · ·	»	14 ֆն 22
Վարտիկ » » » պրոտրբիով · · · · ·	»	11 ֆն 24
Մխոց » » » » · · · · ·	»	20 ֆն 38
» » » » տանթելայով · · · ·	»	25 ֆն 65
Քորսէ՝ Բարիզի Կուրտէ գործատան · · · · · · · · · ·	»	26 ֆն 70
Քորսաժ բամպակեայ, մետաքսեայ · · · · · · · · · ·	»	11 ֆն 26
Ֆանէլա լաւագոյն տեսակէն · · · · · · · · · · · · ·	»	15 ֆն 40

ՄԱՆԿԱՆՑ ՀԱՄԱՐ ամէն տեսակ զգեստեղէնք և ձերմակեղէնք։

	ԴՐՇ·
Սեղանի սփռոցներ գունաւոր՝ 6 անձեռոցով · · · · · · · ·	20 ֆն 39
» » գունաւոր 6 և 12 » · · · · · · · · ·	65 ֆն 145
Անկողնոյ ծածկոցք մէթրը · · · · · · · · · · · · · · ·	9 ֆն 17
Գուլպայ՝ Ֆիլ ա'էքոս, բրդեայ, բամպակեայ · · · · տուզինան	40 ֆն 145
Կտաւ Վիշիի, մէթրը · · · · · · · · · · · · · · · · ·	3 ֆն 5
Սպիտակ տպածոյ՝ լաւագոյն տեսակէն · · · · · · · · · ·	2 ֆն 5 ½

Եւ ուրիշ ամէն տեսակ ապրանքներ

Ցանձնարարութեանց համար պէտք է գրել «Ծաղիկ»ի Ցանձնակատարութեան Գրասենեակին։ 7—52

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ, Ամսաթերթ Ազգ· Գրական եւ Քաղաքական· Խմբագիր-Հրատարակիչ՝ Մատթէոս Մամուրեան։ Տարեկան բաժանորդագինն է 80 դրշ· Ազգ· ուսուցչաց համար 50 դրշ։ Բաժանորդագրուելու համար կարելի է դիմել «Ծաղիկ»ի Խմբագրութեան

—

ԾԱՂԻԿի Առաջին տարւոյ շրջանը, գեղեցիկ եւ հաստատուն կերպով կազմուած, կը վաճառի ի դին 50 դրուշ։

—

ՍԻՄՈՆ ԳԱԲԱՄԱՃԵԱՆ

ՆՈՐ

ԲԱՌԱԳԻՐՔ

ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

Հրատարակուած է 34րդ թերթը։

Ամբողջ գործն պիտի բաղկանայ 45 թերթերէ (այսինքն 720 էջերէ։

Բաժանորդագինն է կանխիկ 15 դահեկան։ Դիմել առ հեղինակն ի Պէրպէրեան տպարան։

Բառագիրքն յետ տպագրութեան պիտի ծախուի ի գին 20 դահեկանի։

ԼԱՎԸՆԻՈ ՏԷ ՖԱՄԻՅԼ

(Ընտանեաց ապագայն)

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓՈԽԱԴԱՐՁ ԸՆԿ·

ՎԱՍՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵԱՆ ԴՐԱՄԱՊԼԻՈՑ

Կը գործէ ընդ հսկողութեամբ Դաղղիոյ կառավարութեան

Կեդրոնատեղի՝ 61, Ռիվիպլիք փողոց, Լիոն (Ֆրանսա)

Ապահովագրեալ դրամագլուխ 100,000 000 ֆր

ԼԱՎԸՆԻՈ ՏԷ ՖԱՄԻՅԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆն, որ հաստատուած է նպաստելու համար փոքր խնայողութեանց, արագ զարգացում մը ունեցած է։ Իւր նպատակն է որոշեալ պայմանաժամի մէջ վերակազմել դրամագլուխն։

Ընկերութեան գործառնութիւնք բազմադիմի են, ինչպէս շարժական արժէքից և փոխ տրուած դրամագլխոց ապահովագրութիւն, կորուստեալ դրամագլխոյ մը վերակազմութիւն։ Երաշխաւորութիւնք և Գլխաւորաբար՝ փոխառութեանց և ճարտարուեստից և վաճառականութեան մէջ գործածուած դրամագլխոց, մանկանց համար օժիտք, հանգստեան անտուկ ծերութեան համար, ցկեանս եկամուտներու կազմութիւն, ի մի բան այն ամէն գործառնութիւնք որոց նպատակն է խնայողութիւն։ Ընկերութեան Պոլսոյ գործակալութիւնն սկսած է 1884 Յունուար 1էն։

Տեղեկութեանց եւ բաժանորդագրութեան համար դիմել առ Բարսեղ էֆէնտի Թէլլալեան, գործակալ Ընկերութեան ի Կ· Պոլիս, Պահճէ—Գաբու, Շէյխ—Իսլամ խան, թիւ 11։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Բառարան Ֆրանսերէն Հայ-աշխարհիկ, ի Մեսրոպ Նուպարեանէ· Գին 20 ֆր։

Առտնին Տնտեսութիւն, Մ· Մամուրեան· Գին 8 դրուշ։

Առաջնորդ փրկութեան, Գրեց Գաբրիէլ Քահանայ Կիւրլէի· Գին 5 դրշ։

Մէճէլէյի անքեամը Ատլիյէ· Օսմանեան տպագրչէն Օրէնքէրէ· Թարգ· Նիկ· Թոթվայեան· հինգ հատորներու բաժնուած, իւրաքանչիւր հատորի գինն է 10 դրուշ։

Մայր ցուցակ Հայերէն ձեռագրաց Կայսերական մատենադարանին ի Վիեննա· Մխիթարեան Միաբանութենէ· Գին 10 դրուշ։

Սոյն գիրքերը դաւառներէն ստանալու համար դիմել «Ծաղիկ»ի Խմբագրութեան։

—

Բաժանորդագին ԿԱՆԽԻԿ Թուրքիոյ համար տարեկան 50 ղրշ., Ռուսիոյ համար 5 բուբլի, ուրիշ երկիրներու համար 12 ֆր։
Վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդագրութիւնք եւս կ'ընդունուին։
Գաւառներէն Օսմանեան Նամակագրոշմ կ'ընդունուի՝ 1 ղրշ.նոցը 34 փարայի հաշուով, կամ 100 ղրուշի փոխարէն 115 ղրշ։
ԾԱՂԻԿի վերաբերեալ ամէն գործի համար դիմել
Առ. Տնօրէն-Հրատարակիչ
ՑՈՎՆԱՆ Գ. ՓԱԼԱԳԱՃԵԱՆ
Պոլիս, Պահչէ-Գաբու, Թաշ խան, թիւ 50

ԾԱՂԻԿ

ԼՐԱԳԻՐ

درعليه‌ده بغچه قپوسنده طاش خانده ٥٠ نومروده « زاغيك » غزته‌سى مديرى پالاقاشيان حوونان

S'adresser à
HOVNAN PALACACHIAN
Directeur du journal arménien «Dzaghik»,
Rue Bahtché-Kapou, Tach Han, 50
CONSTANTINOPLE

40 փարա — Ազգային, Քաղաքական եւ Գրական — 40 փարա

ՆՈՐ ՇՐՋԱՆ — Բ. ՏԱՐԻ. ԹԻՒ 15 — ՇԱԲԱԹ — 25 ՅՈՒՆՈՒԱՐ 1892

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՆՇՄԱՐՆԵՐ

—

ԳՐԱԴԱՏՈՒԹԻՒՆ (1)

Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանի «Ամուսնական խնդիրներ» գրքին վրայ,

Ի Բժիշկ Միսաք Արամեանէ

Զ.

Սեդրակեան Սրբազանը իւր աշխատութեան երրորդ գլխի մէջ որոշելով, այն ալ՝ ինչպէս տեսանք՝ ի լուր զարթուցեալ և ի կարծ ընդոստացեալ՝ թէ ի՞նչպէս է վարուել ընդհանուր եկեղեցին չհաստութեան վերաբերմամբ, հետեւեալ գլխով կ'սկսի իւր հետազօտութեան այն մասը, որ իսկապէս մեր եկեղեցւոյ համար նշանակութիւն ունի իւր գործնական կարեւորութեամբ։ Այդ գլխի մէջ Սրբազան հեղինակը կը կը պատմէ թէ, չհաստութեան խնդիրը ի՞նչպիսի կարգով մեր եկեղեցւոյ դիտակցութեան մէջ բացապարզուել է և կանոնական վերջին որոշումն է ստացել։

Այստեղ ալ Ս. հեղինակի առաջնորդը հանգուցեալ Հ. Բաստամեանցի աշխատութիւնն է։—ուղղակի քաղուածք։ Ով որ ծանօթ է ողբացեալ իրաւաբան վարդապետի դիտնական հետազօտութեան, նորա համար Սեդրակեան Սրբազանի գործի մէջ չկայ մի նոր բան, որ հանգուցեալ Հ. Բաստամեանի ձեռնարկած հետազօտութեան շարունակութիւնը լինէր և նորա ցանկացած մըշակումը համարուէր։ Եթէ նորութիւն մը կայ, դա այն է որու մասին արդէն դիտել ենք — օրինակի կատարելութեանց աղաւաղում և թերութեանց կրկնում։

Ի՞նչպէս է վարուել Հայաստանեայց արեւելեան(2) եկեղեցին քրիստոնէութեան առաջին չորս դարերու մէջ չհաստութեան խնդրոյ վերաբերութեամբ, կը հարցնէ Ս. հեղինակը, և կը պատասխանէ. «Ճիշդ այնպէս, ինչպէս վարուել են յունական (?) և հռովմէական եկեղեցիները։ Իրաւ է, կը պատճառաբանէ Սեդրակեան եպիսկոպոսը, հռոմէական օրէնսդրութիւնը պաշտօնական նշանակութիւն չէր կարող ունենալ Հայոց համար, սակայն նորա թէ՛ անուղղակի ազդեցութիւնը, թէ՛ մովսիսական օրէնքը և թէ՛ միւս եկեղեցեաց սովորութիւնը բաւական էին նորա հրահանգութեան համար» (եր. 41)։ Ճշմարիտ, այսպիսի մի ենթադրութիւն ընելու համար կա՛մ շատ սակաւ ծանօթութիւն ունենալու է ազգային եկեղեցական պատմութեան վրայ, կա՛մ բոլորովին ազատ և քմահաճ յարաբերութիւն դնելու է դէպ ի այդ պատմութեան պարզորոշ վկայութիւնը։

Ինչ որ կը վերաբերի Սեդրակեան Սրբազանի այն հայեցքին՝ թէ ի սկզբան ընդհանուր եկեղեցին բաւական կը համարէր վարուիլ մասամբ մովսիսական օրէնքով, մասամբ հռովմէական օրէնսդրութեամբ, այդ քմահաճ կամ խիստ տարակուսելի ենթադրութեան մասին նախորդ հատուածի մէջ կարեւոր դիտողութիւնն ըրինք։ — Սեդրակեան Սրբազանն աւելի մօտ կը լինէր ճշմարտութեան և ուղիղ ճանապարհի վրայ կանգնած, եթէ ինքն՝ իբրեւ անուս հեղինակ՝ խոնարհութեամբ հետեւէր իւր հմուտ առաջնորդի, Հ. Բաստամեանցի շաւղին։ Եթէ Սեդրակեան Սրբազանը կանոնաբանութեան օտար գրականութենէն կարեւորութեան չափով հմտութիւն պաշարած լինէր, անշուշտ այդ մասին ոչ միայն ընդարձակած կը լինէր իւր ըմբռնողութիւնը, այլ և կը տեսնէր Հ. Բաստամեանցի հայեցողութեան հաստատութիւնը։

Դիցուք թէ Սեդրակեան Սրբազանի հայեցքը մի տեսակ հիմնաւորութիւն ունի. սակայն մեզ համար մի առեղծուած կը ներկայացնէ, երբ Ս. հեղինակը կ'ուզէ մեզ հաւաստիացնել թէ՝ քրիստոնէութեան առաջին չորս դարերու մէջ, ամուսնական չհաստութեան խնդրի նկատմամբ՝ Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ հռովմէական օրէնսդրութեան ազդեցութիւնը, մովսիսական օրէնքը և միւս եկեղեցեաց սովորութիւնը բաւական էին զայն հրահանգելու համար։ Հայաստանեայց եկեղեցւոյ պատմագրութիւնը կարող է շնորհաւորել զՍեդրակեան Սրբազան՝ նորա ըրած դիւտի համար. միայն հարց է՝ թէ ո՞ր աստիճան կարող է այդ դիւտէն օգտուիլ։ Այդ պատմագրութիւնը մինչեւ այժմ այնպէս կ'ըմբռնէր թէ քրիստոնէութեան առաջին դարերու մէջ ո՛չ հռովմէական եկեղեցի կար և ո՛չ յունական, այլ մի ընդհանուր առաքելական եկեղեցի տեղական բաժիններով,— արեւմուտքի և արեւելքի անկախ եկեղեցիներով, որոց թուի մէջն է Հայաստանեայց եկեղեցին։ Բաց աստի, այնպէս կ'ըմբռնէր որ, եթէ Հայաստանեայց եկեղեցին կը պարծենայ իւր առաքելականութեամբ, կը պարծենայ այն միակ իրաւացի պատճառով, որ նորա մէջ ամէն բան առաքելական է. — առաքելական վարդապետութիւն, առաքելական աւանդութիւն, առաքելասահման

---

(1) Շար. «Ծաղիկ»ի նախորդ թիւէն։

(2) Համոզուած ենք, որ Սեդրակեան Սրբազանը Հայաստանեայց եկեղեցին արեւելեան անուանած է անշուշտ լոկ սորա աշխարհագրական դրութեան համեմատ և ոչ այն մտքով, ինչպէս որ ընդհանուր եկեղեցական պատմութեան մէջ սովորութիւն է կաթուղիկէ եկեղեցին բաժանել երկու՝ արեւմտեան և արեւելեան բաժիններու։ Ազգային եկեղեցական պատմութիւնը մեր եկեղեցւոյ վերաբերմամբ չգիտէ ոչ արեւելեան և ոչ արեւմտեան, այլ կը ճանաչէ միմիայն մի Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցի։ Եթէ հարկ լինէր աշխարհագրական բացայայտչի, անշուշտ պիտի կոչուէր հիւսիսական (Որէն. Շարակ.)։ Բարեբաղդաբար այդ պէտքը չէ զգացուած, հետեւաբար արեւելեան խօսքը միշտ անտեղի պիտի համարուի, որպէս պատճառ թիւրիմացութեան։

հիմնական օրէնք, կանոն և կարգ՝ ժամանակի ընթացքի մէջ բացապարզուած հոգեշունչ ազնուութեամբ։ Զենք կարող մտածել թէ Սեդրակեան Սրբազանը չգիտէ այն իրողութիւնը թէ, քրիստոնէութիւնը՝ Արգարի օրով՝ Թադէոսի և Բարթողիմէոսի առաքելութեամբ մտնելով ի Հայս և հալածանաց դարերու մէջ նուաղելով կեդրոնացաւ ի Կապադովկիա, որ մին էր Հայոց բնագաւառի ազդագրական բաժիններէն, և այդ տեղէն ալ վերստին հաստատուեցաւ ամբողջ աշխարհին մէջ Ս. Գրիգոր Լուսաւորչի քարոզութեամբ։ Արդ, մի կողմէն այս փաստն ունենալով, միւս կողմէն այն իրողութիւնը թէ ամուսնական չհաստութեան մասին Կապադովկիայի եկեղեցին արդէն վաղուց մշակել և լրացուցել է մովսիսական օրէնքները՝ համաձայն հոգւոյ քրիստոնէական ուսման, ինչպէս ցոյց է տուած Ս. Բարսեղի կանոնական ընդարձակ թուղթը, — այս փաստերու առաջ այլ եւս կարելի՞ է խօսք բանալ հռովմէական օրէնսդրութեան ազդեցութեան և միւս եկեղեցեաց սովորութիւններու վրայ, քանի որ Կապադովկիան Հայոց բնագաւառի նահանգն էր, քանի որ այդտեղ էր սնել, սովորել և քահանայապետական կարգն էր առել Հայոց Ս. Գրիգոր Լուսաւորիչը և վերջապէս այդտեղէն փոխադրուել էին ի Հայս հովուական պաշտօնին հմուտ կրօնաւորներ, ի գործակցութիւն Լուսաւորչի՝ քրիստոնէական լուսաւորութեան գործը յաջողեցնելու համար։ Ի՞նչ նշանակութիւն կարող էր ունենալ Սուրբ Գրիգորի քարոզութեան մէջ առաքելական խօսքը՝ «Բաւական է անցեալ ժամանակն լինելոյ կամացն հեթանոսաց, այսուհետեւ ըստ կամացն Աստուծոյ կեցցուք» (Ագաթ.), եթէ ոչ այն, թէ հեթանոսական բարոյից տեղ պիտի հաստատուի քրիստոնէական բարոյականը, որու հիմնական թելադրութիւններէն մին է՝ խորչիլ հեթանոսական աղգաշաղախ պղծութենէ։ Այս գործի մէջ հրահանգութեան համար, անտարակոյս՝ Ս. Լուսաւորիչը իւր հրաւիրած գործակիցներով օրինակ պիտի առնէր այն, որ ի վաղուց ի Կապադովկիա կանոնադրուած էր ըստ կամաց Աստուծոյ կենցաղավարելու։

Այս պատճառով տարակուսելի պիտի համարինք Հ. Բաստամեանցի կարծիքը՝ թէ չհաստութեան հարցը ի մեզ անորոշ դրութեան մէջ էր մինչև անգամ քրիստոնէութիւնը ազգովին ընդունելէ յետոյ. ի հաստատութիւն իւր խօսքի՝ հանգուցեալ վաստակաւոր վարդապետը մատնանիշ կ'ընէ թէ Լուսաւորչէն յետոյ ալ, երբ Հայաստանեայց եկեղեցին վերականգնած և բարեկարգուած էր ըստ ամենայն մասանց, չքհաս պսակները կը պատահէին յաճախ և շատ մերձաւոր ազգականաց մէջ. — այս կարծիքը վարկպարզի պիտի համարինք այն հիմամբ թէ անհնար է որ Ս. Լուսաւորիչն այս հարցն անորոշ դրութեան մէջ թողած լինէր, քանի որ քրիստոնէական վերածնութիւնը բարոյական բովանդակութեամբ կ'սկսի ամուսնական կենակցութեան ազնուացումէն, և քանի որ Կապադովկիայի եկեղեցւոյ մէջ, ուր սնած ու դաստիարակուած էր Գրիգոր Լուսաւորիչը և ուրկէ կրօնաւորները փոխադրած էր ի գործակցութիւն հովուական պաշտօնի, այդ հարցն անորոշ դրութեան մէջ չէր, այլ մշակուած էր մեկնաբանութեան ոճով։ Այդ պատճառով, Աշտիշատայ ժողովոյ կանոնական սահմանի ծագումը՝ չհաստութեան մասին՝ աւելի բանաւոր է մեկնել ոչ թէ անով որ մինչև այն ժամանակ այդ հարցն անորոշ դրութեան մէջ է եղել, այլ այն իրողութեամբ՝ թէ Ս. Լուսաւորչէն յետոյ՝ Հայք կամ՝ ուղիղն ըսելով՝ երկրի աւագանին, այսինքն արքունիքը և նախարարներն, սկսել էին վերստին հակիլ հեթանոսական բարուց կողմը, և որպէս արդիւնք այդ հակման, որուն զոհ էին գնացել Լուսաւորչի որդիքը և թոռները, նորոգուել էր հեթանոսական ազգաշաղախ խառնակութիւններն ընտանութեան մէջ։

Ներսէս Մեծն Աշտիշատայ ժողովի մէջ կը գանգատի մեծամեծաց անկարգութիւններէն. նոքա կը խոստանան պատկառ կալ օրինաց, ինչպէս որ Ներսէս կը կարգադրէ։ Ժողովը կատարեց իւր խոստումը, բայց մեծամեծք ո՛չ։

Այս մասին արդէն Հ. Բաստամեանցն ալ նշմարելէ, ըսելով թէ «Խորենացւոյ խօսքերէն այնպէս կ'երեւի որ այդ կանոնը կը վերաբերի մասնաւորապէս մեծամեծաց», այսինքն թէ չհաս պսակներու սովորութիւնը եղել է միայն ազնուց մէջ, կամ ընդհանրապէս ըսելով՝ հասարակութեան բարձր դասակարգի մէջ և ոչ թէ առհասարակ բոլոր ժողովրդի մէջ, ինչպէս և բազմակնութեան (աւելի ուղիղ՝ հարճապահութեան) սովորութիւնը։

Սեդրակեան Սրբազան անհիմն կ'ընդունէ Խորենացւոյ այս ցուցմունքը, և կը պնդէ թէ մերձաւոր ազգակիցներու ամուսնութիւններ տեղի կ'ունենային ընդհանուր ազգի մէջ, քանի որ եկեղեցին դեռ սահմանած չունէր այդ բանի համար արգելքներ. (էր. 44)։ Ս. հեղինակն այսպէս մտածելու կը համարձակի անոր համար որ մեր կանոնագրքերու՝ Լուսաւորչի անուան ընծայուած կանոններու մէջ չհաստութեան վերաբերեալ ոչ մի խօսք կայ (Ծան. 35)։ Շատ օտարոտի պատճառաբանութիւն. իսկ և իսկ նոր կրիտիկոսներու քննադատութեան եղանակը։ Երբ որ կայ՝ — «կասկածելի է», «անհիմն է» կ'անուանեն. երբ որ չկայ՝ «կը նշանակէ չէ եղել» կ'ըսեն։ Սեդրակեան Սրբազանն չուզէր մտածել որ այն տեսակ կանոնագրութիւններն վերջին ժողովները սահմանել են ի նկատ ունենալով եկեղեցականութեան տգէտ պաշտօնեայներն, որոնք դժբաղդաբար սկսած էին շատանալ։ Մեծն Ներսէս Աշտիշատայ ժողովի մէջ հրահանգ տուած է ոչ թէ եկեղեցական պաշտօնէից, այլ օրէնքը ցոյց տուած է հեթանոսական բարոյից հետեւող պայազատաց, որոնք արդարեւ, ինչպէս Խորենացին պարզորոշ կ'ըսէ, իրենց սեփական ազատութեան և ժառանգութեան պատճառաւ, չէին թողներ հեթանոս սովորութիւնը՝ մերձաւորաց խնամութիւնը։ Մեծն Ներսէս կանոնական սահմանով օրէնքը հաստատած է անշուշտ այն կերպով՝ ինչպէս Մովսէս, այսինքն ամուսնական ճիւղագրութեան անէծքն ու օրհնութիւնը կրկնելով և բացատրելով. այդ օրէնքը վաւերացուցել է ժողովը, ուր եպիսկոպոսաց հետ ի միասին բազմած էին և աշխարհական մեծամեծներ որոնք՝ իրենց ձայնակցութեամբ այդ անէծքին և օրէնքին՝ կը խոստանան պատկառ կալ օրինաց։ Իսկ թէ «մինչեւ այն ժամանակ եկեղեցին արդելք սահմանած չունէր» դա ամենեւին բանաւոր պատճառ չէ Սեդրակեան Սրբազանին պնդելու իւր կարծիքին վրայ, որպէս թէ՝ ոչ միայն մեծամեծաց, այլ ընդհանուր ազգի մէջ տեղի կ'ունենային ազգաշաղախ պղծութիւններ. վասն զի Քրիստոնէութեան ընդհանուր ընդունելութիւնը՝ Ս. Գրոց օրէնքները ու պատուէրներն եւս ընդունիլ կը նշանակէ, ի հարկէ այնպիսի մեկնութեամբ՝ ինչպէս Ագաթանգեղոս կ'ըսէ. «Համարէն տեղեկացուցեալ խելամտացուցանէր, ո՛չ եթէ ծայրաքաղ ինչ արարեալ օգտանս կամ աւրաւուրս (ցանցառ, քամոտուած) խօսեցաւ, այլ յատկապատում արարեալ ուսուցանէր ամենեցուն. ի սկզբանց անտի արարեալ աշխարհապատում արարողութենէ անտի՝ մինչեւ ի բուն սրբոյն պատգամախօսայն Աստուծոյ, ամենեցունց իւրաքանչիւր գործոց և հոգեպատում պատգամաց ընտելս և ծանօթս կացուցանէր... ծանուցանէր... ընծայեցուցանէր զամենայն անայցեալ զպատգամս Հոգւոյն Սրբոյ և ի նմին զմեկնութիւն նորան հանդերձեալ գրեաց նորին զօրութեամբ»։

Այս բանէն յետոյ, կարո՞ղ է մի որ և է ենթադրութիւն, որքան ալ սրամիտ և որքան ալ հանճարեղ մտքէ ծագած լինի, հաւասարիլ Խորենացւոյ պարզորոշ խօսքերու. և բեկանել նորա տուած վկայութեան ոյժը։ Եթէ այս խնդրոյ մէջ մի կէտ կայ, որ Հայ կանոնագէտներու խորին ուշադրութիւնը պիտի դրաւէ, դա անմահ պատմահօր աշխատութեան երրորդ գրքի Ի. գլխի հիմնաւոր վերաբերութիւն ու հետաքննութիւնն է։

(Շարունակելի)

ԳՐԱԳՈՂԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

. . . Խմբագիր (1)

«Սահակ եպիսկոպոս Խապայեան» ստորագրութեամբ հերքումը կարցացի «Ծաղիկ»ի մէջ, որով կը ջանայ հերքել յայտնի ճշմարտութիւնն իմ բողոքոյս, որ էր ընդդէմ գրագողութեան Գեր. Ասատուր եպիսկոպոսի։ Ցաւ զգայի արդարեւ, երբ տեսայ դիմացս ախոյան կանգնած այնպիսի անձնաւորութիւն մի, որ է Գեր. Սահակ եպիս. զոր կը յարգեմ և կը սիրեմ։ Չէի յուսար երբէք որ իւր վերարկուին ներքև առնլով պատսպարէր այնպիսի անձ մի, որ այլոց փառքերով ինքն փառաւորիլ կը ճգնի, և չհամարձակիր անձամբ ի ճակատ ելնել, զուրկ լինելով բոլորովին ի գինուց, և այլոց պաշտպանութեան կը կարօտի։

Գեր. Խապայեան եպս. կ'երեւի թէ իմ բողոքագիրս անձամբ չէ կարդացած, այլ Գեր. Ասատուր եպիսկոպոսի բերանացի պատմութենէն խարուելով, կը կարծէ թէ՝ իմ բողոքս լի էր ըստանոք, զրպարտութեամբք և նախատանոք։ Բա՛ւ լիցի որ այդ տեսակ և ոչ տառ մի գտնուի գրութեանս մէջ. ընդհակառակն Ասատուր եպիսկոպոսի (սոյն հնչմամբ ճանչցուած է բոլոր Միաբանութեան մէջ) անձնաւորութիւնը կը պատուեմ, և կը յարգեմ իւր եկեղեցական պաշտօնէութիւնը հաւասար Պատրիարքի, բայց չեմ ուրանար իմ արդարացի կիրքս որով վարեցայ իւր գրագողութեան դէմ, որ յայտնի վնիռ էր իմ գրքիս դատապարտութեան։

(1) Պատասխանն մինչև ցայսօր ուշացնելուս պատճառ այն յոյսն էր, զոր ունիմ Ամեն. Սրբազան Պատրիարքի վերայ, որ իմ խնդիրքս ընդունելով պիտի բարեհաճի ի լոյս ընծայել և զիմ աշխատութիւն, քանի որ տարբեր են բոլորովին իրարմէ, ըստ ասից Գեր. Խապայեանի, որուն պէտք է հաւատամ. և ըստ որում ուշացաւ պատասխանը Սրբազան Պատրիարքի, պարտաւորեցայ ի տիպմանէ ոմանց բանասիրաց հրատարակել սոյն վերջին բողոքս։

Մեր Գեր. Ախոյեանը Ցլէօրեայ բընագիր նամակին դիւան ոչինչ բանի տեղ դրած, ծաղրելով կը պախարակի՝ անոր մեծ կարևորութիւն ընծայելուս համար, և Նոր Ակխարհի դիւտոց հետ բաղդատելով՝ կը ճգնի նամակին յարգը կորուսանել։ Իրաւունք ունի, բայց պէտք էր պահ մի մտածել որ Ամերիկայի դիւտը կարևորութեան նըկատմամբ ոչինչ առաւելութիւն տուած է Հայոց ազգին ի մասնաւորի, ո՛չ աշխարհային, ո՛չ բարոյական և ո՛չ կրօնական. թերևս վնաս իսկ պիտի պատճառէ Հայոց ազգայնութեան, մաս մի կլանելով իւր ժողովրդային անդնդոց մէջ, ինչպէս ուրիշ շատ երկրաց մէջ պատահեցան։ Իսկ Ցլէօրեայ նման գիտնական և ստուգամտաբան մի անձի հայկական եկեղեցւոյս շուայլած գովեստն և զուղղափառութիւնը ճանչելն ու վերկայելը, կարծեմ մեզ Հայոց համար մեծ պարծանք է քան զԱմերիկայի դիւտըն Գոլոմպոսի։ Ուրեմն ոչ ընդ վայր ծղի ի վեր պարզել եմ սոյն դիւտս ի լոյս հանած ժամանակ։

Գեր. Հայրը կ'ուզէ ցուցնել՝ թէ Միաբանութիւնը հնութեանց յարգ կ'ընծայէր, և թէ՝ հարիւր տարիէն աւելի պահած է զանոնք. յապացոյց առ այս մէջ կը բերէ Եսայի Պատրիարքն, որ իւր նախորդին կենդանութեան ժամանակ ձեռագիրները կը ժողովէր, կ'ըսէ, ինչո՞ւ 1863ին պիտի թոյլատրէր որ թղթերը փուռը նետեն։ Կարծեմ ըսել կ'ուզէ՝ թէ ի բնէ անտի բոլոր Միաբանութիւնը թէ՛ ձեռագրաց և թէ՛ հինաւուրց ամէն տեսակ թղթոց և բանակցութեանց պատմիչներու յարգը ճանչցող էր։ Ն. Գերապատուութիւնը պէտք է գիտնայ որ Եսայի Պատրիարք զիս օրինակ ունեցաւ իրեն, և ճանչեց նոցա յարգն, ինչպէս կանխաւ պատմած եմ. և այս թղթերը Պատրիարքարանի դարաններէն ու պահարաններէն ժողվող ու այրելու սահմանողք վարդապետք են, և թէ ո՛րչափ կարևոր թղթեր, յետկարներ, հրովարտակներ, մանաւանդ նամակներ ի կորուստ մատնուած են անհոգութենէ։ Ո՞ր են Լուդովիկոս թագաւորի և Փրոփականտայի գրուած նամակաց պատասխանները։ Նոյն ինքն Ասատուր եպիս. կը պատասխանէ հաստատելով իւր գրքին մէջ, յեր. 201. «Բազումք (ի հրովարտակաց) բարձեալ են ի միջոյ, և ոմանք ևս եղծեալ և պակասեալ»։ Ասոնց պակասութիւնը կարծեմ յանհոգութենէ յառաջ կուգայ, որոյ անկորուստ պահպանութիւնը թէև frտանց կարօտ չէ, այլ Ս. Աթոռոյն փառք կը համարի։

Գեր. Խապայեան շատ աշխատած կ'երևի պաշտպանելու իւր ուխտակիցն ըսելով թէ նա՝ և «ոչ մի բոպէ տեսած չէ Պ. Սաւալանեանցի պատմութիւնը և ոչ խօսքն ըրած է. և քանիցս թախանձագին խնդրած է (առանց սակայն խօսքն ընելու) որ չլինի թէ Սաւալանեանցի պատմութենէն բառ մի աւելցընեմ։» Կը խնդրեմ իմ յարգոյ ընթերցողներէս որ սոյն տողերը կարդացած ժամանակ զսպեն զիրենք խնդալէ. միայն թէ ինձ հետ սա խորհրդածութիւնն ընեն, զարմանալով միանգամայն թէ Գեր. Խապայեան գիտակցաբա՞ր վտանգի կ'ենթարկէ իւր անձնական խոհականութիւնն, որ կերպով մի արհամարհութիւն կը համարի ընդդէմ հասարակաց դատաստանին։ Ասատուր եպս. Երուսաղէմայ պատմութիւն կը յօրինէ, գիտնալով արդէն որ աշխատասիրած ունիմ ես նոյն պատմութիւնը. վանքի մատենադարանը վեր ու վար կ'ընէ, ձեռագրաց յիշատակարան չթողուր, Յոյն պատմչէ մի նիւթեր կը մուրայ, և կ'իմանայ կը լսէ որ նոր հեղինակութիւն մի եկեր հասեր է Ս. Աթոռը, «Ժամանակագրական ընդարձակ պատմութիւն Ս. Երկրի», չհետաքրքրուիր, չխնդրեր, ձեռք ձգել չջանար, այլ ընդհակառակն թախանձագին կը պատուիրէ իւր գիրքը արբագրողին, որ չը լինի թէ մէջէն խօսք մի, բառ մի առնու աւելցընէ իւր գրքին մէջ։ Ո՜հ, ի՛նչ ասիճանի բարոյակա՞ն ըսեմ՝ թէ գրական անզգայութիւն է այս։ Ո՛չ թէ իւր գտնուած վանուց և իւր խցէն մի քանի քայլհեռի գտնուող, այլ եթէ Բրիտանական, Բարիզեան, Էջմիածնական ազգային մատենադարանաց մէջ ևս եթէ գիտնար որ կը գտնուին Երուսաղէմի և առաւելապէս Հայ ազգին վերաբերեալ գրչագրեր, կը պարտաւորէր դիմել անդ և ծղի ի վեր պարզելով, և կամ իւր հասկանալի ոճով խօսիմ, թեերը սօթթելով, պրպտել զանոնք, թէև բազմաքիրան աշխատութիւն ևս արժելու լինէր իրեն։

Եթէ Ասատուր եպս. չէ տեսած, չէ աչքէ անցուցած և ոչ բոպէ մի, ինչէ՞ն գիտէ որ Գր. Շղթայակիր չորս թուղթ ունի գրած, մին առ Թագաւորն Գաղղիոյ, մին առ երկրորդն Նորին, միւսն ի Հռոմ առ ժողովն Փրոփականդայի և չորրորդն ի Պոլիս առ հիւպատն Գաղղիացւոց. և միայն այս վերջնոյս պատճէնն ունիմք կ'ըսէ ի ձեռին, և կը դնէ իւր պատմութեան մէջ. ինչէ՞ն գիտէ ուրիշ երեք նամակներ ևս գրուած լինելն, որոց բնագիրքը չկան կ'ըսէ, որք ամբողջ կը գտնուին իմ գրքիս մէջ։

Մեր բողոքոյն՝ Գեր. Բանադատը կ'ըսէ թէ, վիճաբանութեան դուռ չբանալու համար չեմք հարցներ իրեն, թէ ինքն (Սաւալանեանց) այդ պատմութեան

լ՞նչ պայմանաւ և խոստմամբ ձեռնարկած է։ բայց դարձեալ ինքն իւր մըտքէ անցուցածը գրչին մատնութեամբ նոյն հարցումը կ՚ուղղէ ինձ, որուն սիրով յանձն կ՚առնում պատասխանել։ Պատմութեան ձեռնարկելը սա պայմանաւ էր որ լրանալէն յետոյ Ս. Աթոռոյ մամլով ի լոյս ընծայուի։ Այս էր իմ պայմանս և խոստումս թէ՛ լուսահոգի Յովհաննէս և թէ՛ Եսայի Պատրիարքաց հետ ըրած։ և վերջինս մինչև անդամ խոստացել էր 200 օսմանեան ոսկի չընորհել՝ պայմանաւ հատուցանելու տըպուելէ և ի վաճառ հանուելէ յետոյ, որում հաճութիւն չտուի։ Եւ եթէ Պատմութեանս հետ գրած ու զրկած նամակաւս զայն ի հաճոյս և ի անօրէնութիւն պատկառելի խորհրդոյն թողուցել եմ, ո՛չ թէ գրքատան մէջ ցեցերու մատնելու և կամ իւր պատրաստ կերակուր այլոց ջամբելու, այլ ի լոյս ընծայելու համար պատեհ միջոցաւ։

Այլանդակ կ՚երևի ինձ նաև հարցումը զոր կ՚ընէ Գեր. Հայրը ըսելով թէ՝ իրաւունք ունէ՞ր իրեն հետ տանելու, քանի որ Երուսաղէմի համար և Երուսաղէմի միջոցներով գրուած էր։ Կը պատասխանեմ թէ՝ այնքան իրաւունք ունեցայ հետս տանելու, որչափ որ Մար Աբաս Կատինա իրաւունք ունեցաւ Եղեսիոյ միջոցներով հաւաքած պատմութիւնն հետը տանելու ի Հայաստան՝, նորա պատմութիւն Հայոց համար էր, նոյնն է նաև իմս բովանդակ ազգիս համար, և ոչ լոկ Երուսաղէմի Միաբանութեան։ Գեր. Հայրը սոյն հարցումը չպիտի ընէր ինձ, եթէ կռահելու լինէր, թէ կարող էի և ես հարցընել իրեն թէ՝ ի՞նչ իրաւամբ Միաբանութենէ ոմանք՝ հրաժարած ժամանակ՝ Ս. Աթոռոյն միջոցներով իրենց գնած տներն յետոյ վաճառելով, դոյացած գումարներն իրենց հետ տարած են։ Բայց ես այս օրինակ հարցումներ չեմ ըներ իրեն, ըստ որում տեղեկութիւն չունենալուն՝ չպիտի հաւատայ։ Զեմ ուզեր դարձեալ յիշել Վեհապետեան Ամեն. Սրբազան Հօր այն խոստումը զոր ըրած էր ի Պոլիս եղած ժամանակ. յԵրուսաղէմ գնալէն յետոյ շնորհ մի ընելու դիտաւորութիւնը զոր յայտնած էր լուսահոգի Փափազեան Ստեփան էֆէնտիի, թէև իմ վախքս էր և է միշտ գիրքս տպագրուած տեսնել ի մխիթարութիւն ինձ և ի քաջալերութիւն այլոց, և ոչ ուրիշ որ և է շնորհ։

Խօսքս չերկարելու համար, և վախնալով որ մի՛ գուցէ այս գրածներս ալ լուտանք, անարգանք և զրպարտութիւն համարի իւր անձին դէմ Գեր. Խապայեան Հայրը զոր կը յարգեմ ի սըրտէ, զայս ինչ կը յաւելում ըսել թէ Գեր. Ատատուր եպս. ի աշխատութիւն, որոյ տպագրութեան հաճութիւն չէր տուած ի սկզբան Սրբազան Պատրիարքը, որչափ որ իմ երկսիրած գրքիս վերայ ձեռած ու հարստացուցած է նոյնպէս գրաբար լեզուով, այսու ամենայնիւ ունի իւր արժէքն, այն է հրատարակաց ու գատական թղթոց պարունակութիւններ մէջ բերելով՝ մանրամասնութեամբ իւր պատմութիւնն ըստուարացնելը։ Փափաքելի էր որ արաբացի արձանագրութեանց հետ հայերէն թարգմանութիւնքն ևս դնէր, և հայկաբանութեան ևս մի քիչ ուելի խնամք տանէր, օրինակ առնելով իրեն՝ իւր գրքին յառաջաբանը։

Տ. Հ. Թ. ՍԱՀԱԼԱՆԵԱՆՑ

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ

Կիւրակէ օր մայրաքաղաքիս եկեղեցեաց մէջ կարդացուեցաւ հետեւեալ Պատրիարքական Կոնդակն, որ զրկուած է նաև ի գաւառս։

«Խորէն Ծառայ Յիսուսի Քրիստոսի եւ շնորհիւ սուրբ հոգւոյն Պատրիարք Կոստանդնուպոլսոյ եւ վերատեսուչ ամենայն վիճակացն, սուրբ եկեղեցեաց Աստուծոյ որ ի մայրաքաղաքիս, բարեխաւս քարոզչաց, աւագերիցանց, պատուարժան Թաղ. Խորհրդոց եւ հաւատացեալ եկեղեցականաց եւ ժողովրդականաց ողջոյն եւ օրհնութիւն կալ եւ մնալ միշտ պահպանեալ ի շնորհս եւ ի խնամս հոգւոյն սրբոյ, ամէն.

«Գիտութիւն լիցի սիրելեացդ իմոց զի Խորէն Եպիսկոպոս Նար-Պէյ, Պէշիկթաշի քարոզիչն որ եկեղեցական կարգապահութեան հակառակ վարմանց մէջ գտնուելով՝ այլ եւ այլ առթիւ այս մասին իրեն եղած աղդարարութեանց չէր անսար, վերջին օրերս ալ ամենածանր յանցանաց մէջ գտնուած է լոկ ի պատճառս չարաշահութեան։ Յանցանքին ծանրութիւնը, պարագայներն ու նպատակը պաշտօնապէս ծանօթ են Պատրիարքարանիս, որք դժբազդաբար բնաւ արդարանալի կողմեր չունին, և արդէն իւր իսկ խոստովանութեամբ հաստատուած են, և դառնալէս կը վչացնեն թէ՛ իւր եկեղեցական սուրբ և բարձր կարգին սեփհական ազնուութիւնն և թէ՛ մարդկային իսկ հասարակ պարկեշտութիւնն։ Ուստի ցաւ ի սիրտ պարտաւորեալ եմ՝ ի պահպանութիւն պատուոյ եպիսկոպոսական բարձր կարգին և ի փարատումն դայթակղութեան ի մտաց ժողովրդեան՝ դադարեցուցանել վերոյիշեալ եպիսկոպոսն Պէշիկթաշի Ս. Աստուածածնայ եկեղեցւոյ քարոզչութենէն և արգելել զինքն առ այժմ իւր հոգեւոր կարգին յատուկ բոլոր պաշտամանց գործածութենէն ի մեծաց մինչև ի փոքունս։ Եպիսկոպոսական ատոյնանին բարձրութիւնը ընդհանրական Հայրապետի վերին հեղինակութեան ենթարկեալ հանգամանք ունենալով իւր մասին վերջնական տնօրինութիւն վերապահեալ կը մնայ յապագայ ժամանակի հրամանի նոյն հոգեւոր դերիշխանութեան։

«Մեր այս ախուր և տրամալից տնօրինութիւն ծանուցանելով առ հասարակ բոլոր պաշտօնէից եկեղեցւոյ և համօրէն ժողովրդեան՝ կը խնդրեմ աղօթել առ Աստուած որ կարգապահ և հաւատարիմ եկեղեցականութիւնն պահէ ի փորձութենէ, ի չինութիւն հաւատացելոց և ի փառս միոյ միայնոյ առաքելական Ս. Եկեղեցւոյ. ամէն։»

Տուեալ ի Պատրիարքարանի
Հայոց Յամի Ընորհաց 1892
Յունուար 16, Թիւ 159

ՊՈՊԿՔԵՆ

Դեռ չէր արեւն ժողոված
Ոսկի թելերն իւր հեռաց,
Ծովափն անոր գայի ժուռ,
Դիմակ տրժգոյն ու տխուր։

Ի զուր ոտիցդ մանտրուխալ
Նշանն, աչկունիս իմ կառչեալ,
Կ՚որոնէին, ո՞ւ ի զուր
Այն աւագի վրայ կուռ։

Խին՝ զոր թուչեն փրփուրներ
Ալեակներու մըշտերեր,
Լիզած էին շատ ուժգին
Փընտռած հետքերդն այն իմ։

Ալ հոգւոյս մէջ դարձուցի
Աչերս՝ աղբիւր արցունքի,
Անդ որոնել անուշակ
Անշինչ քոյին յիշատակ։

Թէ ծովեզրի վատ տարրեր
Աւազ, խին եւ ալիքներ,
Կամին չտալ ինձ ցոյց ոչինչ
Հետք մ՚ի քէն գէր ըսփոփիչ.

Նուրբ եթերէ պիտ՚ խնդրեմ
Բերել յականջս քո վսեմ
Ձայնդ ու երգերն զուրս հեղոյր
Բոսոր շրթունքդ վարդաթոյր։

Թէ երբ լուսնակն եւ նըշոյլ
Սփռէ հանուր՝ յատեղց հոյլ,
Պիտ՚ աղերսեմ անդ պայծառ
Տեսնել հայեացքդ հոգեվառ։

Ա. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

ՏՈՒՐՂՈՒՏԼՈՒ ԳԱՍԱՊԱ

(Շար. և վերջ նախորդ թուէն)

Ամէն գեղեցկութիւն իւր հակառակ տգեղութիւնն ունի։ Սոյն գաւառակն ալ, իւր օդին և ջրոյն գեղեցկութեան և պատուականութեան հակառակ, թաղից՝ փողոցաց՝ և շուկայից մէջերն անգամ, իւր աղտոտ և ապականեալ տեղերն ունի։ Շատ կը գտնուին պատեր և վիճակ վայրեր, որոց դրսի անկիւնները՝ նոյն իսկ հասարակաց ճամբուն վրայ՝ միզանոցներ և աղբանոցներ են։ Հասարակաց պողոտայ և հասարակութեան բանուկ սրճարանից առաջ՝ ամենէ փիյացալը վայրն է ցարդ հայվան փազարը։

Գալով Նիւթիս և այլ էական մասանց, գիւղաքաղաքիս մէջ Հայք կը կազմեն շուրջ 120 տուն, որ գրեթէ մեծաւ մասամբ Զմիւռնիացի, Կեսարացի և այլ գաւառացի ընտանեաց հաւաքածոյ մը կը համարուին։ Հայ ժողովուրդն ատ ընդհանրապէս ձեռագէտ արհեստաւոր և մանրավաճառ են. կան նաև մի քանի երևելի երկրագործ և վաճառական անձինք։ Խաղաղասէր են բարեկեցիկ և կրթասէր։ Հայք ունին ատ մի քարուկիր հոյակապ եկեղեցի, և մի արժանաւոր քահանայ, որ է բընիկ Պանարմացի Սրբ. Տ. Յուսիկ քահանայ Յ. Մանիկեանն. և երկու դպրոց՝ յեկեղեցւոջն, մին՝ արական, և միւսն՝ իգական սեռի համար։ Բայց այս դպրոցք խիստ փոքրիկ, խարխուլ և անբաւական լինելով, ի վաղուց որոշած են հանրածանօթ ազգասէր անձնաւորութիւնք նոր օրինաւոր դպրոց շինել, և պաշտօնական բարձրագոյն հրամանագրոյն կ'սպասուի։

Իգական սեռի մասնաւոր դպրոցը՝ նոր այս տարի սեպտ. ամսոյ մէջ պատրաստուեցաւ։ Անկէ առաջ՝ աղջիկ և մանչ խառն ի միասին մէկ դպրոցի մէջ կ'ուսնէին և կը դասախարակուէին ի մի դասատիարակէ։ Ի շնորհս դասատիարակութեան՝ աղջկանց օր քան զօր զգացմամբ զարգացումն և յառաջադիմութիւնը, և ամէն տարի դպրոցական քննութեանց և պարգևաբաշխութեան հանդիսից, մանաւանդ այս տարւոյ քննութեան հանդիսին մէջ նոցա արտասանած ազգու բանախօսութեանց, տրամախօսութեանց և արդար բողոքանաց ձայներն, և «իգական սեռի մասնաւոր դպրո՛ց դպրո՛ց» գոչելով աղէկուր կանչ ու կառանչներն վերջապէս ազդեցին խորագդած՝ աւելի իգական սեռի՝ փափուկ սրտերն։ Եւ այն տիկնայք՝ որ ասկէ իրբ երկու տարի առաջ, ի նպաստ Սանուհեաց դպրոցի, Ագապեան անուամբ ընկերութիւն մը կազմակերպած էին, և կը շարունակէին դեռ բուն նպատակի գործոյն պատկման յաջող ժամերուն սպասելով և ահա այն սպասման և յուսոյ ծանր ժամերն յանկարծ արագ արագ հոլովեցան և լրացան. վերջապէս ծղիս ի վեր տիւառնալով, յաջողեցան եկեղեցւոյս երկու յարակից սենեակներն ի մի ճուլել տալով, աղուոր կոկիկ դպրոց մը պատրաստել, և Մանիսայէն համեստ օրիորդ վարժուհի մ'ալ կոչելով, դասել և ազատել աշակերտուհիներն այն վաղամեայ Ներսիսեան երկսեռ կրթավայրէն։ Սքսրալի և սրտաշարժ էր այն իսկ հանդէսն, երբ Սանուհիք, իրրև երամք աղաւնեաց, միահոլոյն բոլորեցան իրենց քառամեայ դասատուին շուրջ, և ի յարգանս և ի նշան երախտագիտութեան, համբուրելով նորա աջն՝ հրաժեշտ տուին նմա. և դասատուն՝ հայրաբար խրատելով և օրհնելով զանոնք, յանձնեց իրենց նոր դպրոցին նոր վարժուհւոյն։ Եւ այժմ, յորմէ հետէ զատուեցան աղջկունք մանչերէն, սոյն մէկ անձուկ դպրոցի մէջ մի դասատուի միջոցաւ մանկավարժութեան և դասախօսութեան դառնաշխատ և դըժուարաքիրան վիճակ, ըստ բաւականի, բարեխառնուած կը համարուի։ Եւ այս դպրոցք, ի վաղուց անտի, ժողովրդեան մասնավճար տուրքովը կը մատակարարուին։ Իգական սեռի դպրոցի մասնաւոր հոգաբարձութիւնը՝ Ագապեան ժըրադլուխ ընկերութեան, և արական սեռինը՝ յատուկ երկու ուսումնասէր արդոյ անձանց, և Պատ. Թաղական Խորհրդոյ սեփական է։ Ահա մի մեծ ապացոյցն թէ՝ տեղւոյս ժողովուրդն իւր դպրոցաց նկատմամբ անտարբեր չէ, կը սիրէ և կը հոգայ դպրոցն և ուսմունքն։

Հայերն ատ՝ յորմէ հետէ գաղթած են, երեք անգամ նորոգ կառուցած են իրենց եկեղեցին, ի շնորհս և ի Բարձր հրաման Օսմ. բարեխնամ Տէրութեան. զայս կը հաստատեն նոցին յիշատակարանքն։ Ներկայ տաճարին դրան ճակատի յիշատակարանն է.

«Զքնաղ կառուցաւ Սբ եկեղեցիս, Տեառնագրեալ յանուն ամենօրհնեալ Սբ Աստծնի, ի Հայրապետութեան Սբ Էջմիածնի տէր Յովհաննու սրբազան Կաթողիկոսի ամ Հայոց, և յԱռաջնորդութեան Զմիւռնոյ Տէր Պօղոսի Աստիմատ արքեպիսկոպոսի Պրուսացւոյ. վերակացութեամբ յորդոյ մէի Աւետիս աղայի Զմիւռնացւոյ Էքիզեանց. արդեամբք և աշխատանօք բարեպաշտօն իշխանաց և առհասարակ օրհնեալ ժողովրդոց Տեղւոյս. 1840 օգոստոս 18։»

Երկրորդ տաճարին շինութեան յիշատակարանի պատճէնն այս է.

«Շնորհօքն ամենազօր սբ հոգւոյն Ամ վերատին նորոգեցաւ սբ եկեղեցիս... նի ձեռնտուութեամբ Պոլիս աղատէ Պարոն Աստատուրին, ի Հայրապետութեան... տէն Ղուկասու սրբազան Կաթողիկոսին ամ Հայոց, և յԱռաջնորդութեան մերոյ... ըստ արքեպսկոպոսին. արդեամբք և ծախիւք մեծահաւատ Մէնէ Գիզէզատէ... հանէսին և եղբօրն իւրոյ Մէի Պողոսին, և համայն ննջեցելոց և ծնն... բեանց և յամ վաճառականաց նաև բնակչաց ժողովրդոցն տեղ... Թուոցն մերոց և ի հոկտեմբերի մսին։»

Սոյն յիշատակաքար, անշուշտ արդիւն ձեռամբ, եկեղեցւոյս կանանց վերնատան վերելակի մի սանդղամատ համակոփելու համար, քարակոփի մը ընտիր ծայրատուեր է, և ամենէ կարևոր թուականացոյց թիւքն կամ տառքն անյայտ մնացեր են։ Բայց կարելի է ուսումնասիրել թէ՝ եթէ յիշեալ Ղուկաս կաթողիկոսն այն կարնեցին է, որոյ օրրովը օգոստոսի գնալ գիւտը եղաւ, այն տաճարին շինութիւն 130—140 տարուան գործ է։ Նոյնպէս յիշատակարանին առաջին տողի «վերատին նորոգեցաւ» բառերէն կ'իմաստասիրուի թէ տաճարին առաջին անգամ շինութիւնքն եղած են, բայց նոցա յիշատակարանն չկրցաք գտնել։ Իսկ տեղւոյս եկեղեցւոյ հնութեանը կը վկայեն նաև նոյն իսկ իւր մէջ քահանայագործող և այցելուղ հին կղերաց ձեռագիր յիշատակարանքն՝ եկեղեցւոյս պահարանը պահուած ձեռագիր յայտմաւրին վերջին թղթոյն մէջ։ Տէր Մարգարէ քահանայն վախճաներ է ատ ի Թուականին ՌԿԹ=1620. և այցելեր են Լեհաստանցի Տէր Ոնոփրիոս ի ՌՁԹ=1640, և Սսեցի Տ. Յովհան եպիսկոպոս, ի ՌՃԼ=1659. և Տէր Բարսեղն, որոյ յիշատակարանը միայն կ'օրինակեմ. «Ահա ողորմութեամբն Ամ և կամակցութեամբն ամ սրց, որոյ ես անարժան և անպիտան Բարսեղ սուտ անուն քահանայս որ էի ի յերկրէն Նախչըվանու և ի Նահանդէն Եղէքեաց ծորոյ և ի գեղջէն Գնդեվանուց որոյ եկի ես ի Աստապահ քաղաքս Տուրըլուտ յաղագս քահանայագործութեան ի Աստասէր ժողովրդական միջի գի գալն իմոյ ատ որոյ էր թվ. ՌՃԽԲի ամսն նոյեմբերի ժ, և ի գնալն իմոյ ատի ՌՃԾԳին ի ապրիլ ամսոյ Իեին։ Որոյ էին ընկերակից քահանայք և եղբարքն իմ զար Դաւիթն և զար Խաչատուրն և աւագ սարկաւագ ղնազարէթն, և ուհան զմիրաքն և զՊողոսն...։ Աստ զեկեղեցիս մեր հաստատուն պահեսցէ «....ամէն։»

Գասապա Յ. Յ. ԴԱՐԲԻՆԵԱՆ

1891 Դեկտ. 7

ՎԱՐԺԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԻՊԱՐ

—

Թէ ի՛նչ բարոյական հանգամանքներ կը պահանջուին վարժապետէն

(Շար. նախորդ թիւէն)

Մրցահանդիսի օր մ'էր. հինգ շըրջանաւարտներ կային այն տարին. անոնցմէ մին, Յակոբ, զաւակն էր ազդեցիկ անձի մը որ վարժարանի խնամակալութեան անդամ էր. Անոնցմէ ուրիշ մը, Արիստակէս, միջնակարգ ընտանեաց կը պատկանէր։ Երկու նշանաւոր մրցակիցներ եղած էին ասոնք ամբողջ տարին իրենց դասարանին մէջ։ Վճռական օրն հասած էր։ Ամէն կարգադրութիւնք եղած էին։ Իւր ընկերք իբր կատակ ըսած էին Արիստակէսին թէ Յակոբէն յետոյ պիտի կոչուի, թէ նա Բ. եղած էր, և ինքն՝ Գ.։

Աշակերտք հանդիսավայր կ'առաջնորդուին. Արիստակէս բացակայ է ընկերացը մէջէն. կը փնտռեն, հանդիսականաց մէջ կանգնած կը գտնեն զանի՝ զայրագին դէմքով, խոլոր մոլոր աչերով։ Տեսուչն ինքն անձամբ կ'երթայ զանի կը հրաւիրէ ի հանդէս.— «Հ'ը, չպիտի՛ գամ, կը պատասխանէ, և կը տեսնէք թէ ինչպիսի՛ հանդէս մը պիտի ընէք։ Ես այնչափ աշխատե՛մ, ու աշառութիւն ընէ՛ք դուք. աղէ՛կ, աղէ՛կ։ Որչա՞փ կը սիրէի զձեզ, և հիմա կը տեսնեմ թէ ո՛րչափ անմիտ եմ եղեր։ Այն հարուստ է, խնամակալի զաւակ է, անոր համար կը մոռնաք անոր խարդախութիւնները ու չէք տեսներ իմ ճշդրիտ արժանիքս։ Եթէ զիս անկէ վեր չդասէք, չեմ ներկայանար հանդիսի։» — կը սխալիք, պարոն, կ'ըսէ մեղմիւ Տեսուչն, բայց ազատ էք, ինչ որ ուզէք կրնաք սպառնալ մեզ ու ընել, սակայն գիտցէ՛ք թէ իմ որոշումս որոշում է. սկզբունքիս հակառակ է պայմանի մտնել աշակերտաց հետ, զանոնք ինձ հընազանդեցուցնելու համար։»

Եւ Տեսուչը կ'երթայ բազմիլ իւր աթոռոյն վրայ։ Արիստակէսին շուրջն հաւաքուած հանդիսականք մեծ դժուարութեամբ կը համոզեն զանի և կը ղըրկեն իւր ընկերակցաց քով։

Վկայականաց բաշխման պահուն՝ ըստ նախկին միա՛կ որոշման՝ Արիստակէս Բ. կը կոչուի, իսկ Յակոբ՝ Գ.։ Եւ Արիստակէս առաջինը կը լինի որ ամոթալարտ կը համբուրէ Տեսչին ձեռքն և Տեսուչն ևս ամենէն առաջ կը համբուրէ անոր ճակատը։

Բարթող կը հետաքրքրուէր Տեսչի կենաց մանրամասն պարագայից. կ'ուսումնասիրէր, կը ծանօթագրէր անոր յատկանիշներն իբր թէ ապագային անոր կենսագրութիւնն ընելու համար. բայց բուն նպատակն էր իրեն օրինակ առնուլ զայն և վարիլ անոր հետևողութեամբ։ Եւ արդէն անոր ինչ ինչ բարեմասնութիւնները ցոյց կուտար իւր վրայ՝ ուսանողական կեանքին մէջ։ Ընկերներն՝ որք սովորութիւն ըրած էին տարօրինակ մականուամբ մը մկրտել զիրար՝ Մանկավարժցու կը կոչէին զանի։

* * *

Ե.

Բայց Տեսուչը չէր միայն որ բարի ազդեցութիւններ կ'ընէր Մանկավարժցուին վրայ։ Այցելու ուսուցիչներէն և մնայուն պաշտօնեայներէն մի քանին իրենց առանձին բարոյական հանգամանօք հիացուցած էին ո՛չ միայն զինքն, այլ և դպրոցն ամբողջ. տիրած էին սրտերու։

Պարոն Ալպէրդ այցելու ուսուցիչներէն մին էր. բնական ու բնապատմական գիտութեանց դասախօս. ճոգապահութեան, պարտաճանաչութեան տիպար նկատուած էր նա ուսանողներէն։

73ի ձմեռը շատ սաստիկ եղաւ Պոլսոյ մէջ, ա՛յնքան սաստիկ որ մի քանի օր տներէն դուրս չելան շատեր. ծովու և ցամաքի վրայ դադրեցան երթևեկութիւնք։ Այդ բքաշունչ օրերէն մին, մարդ մը՝ ցրտին դէմ խիստ լաւ պատսպարեալ՝ ձիւնի, փոթորկին անտարբեր, անտարբեր սառուցիկ քամիին որ երեսը կ'տաղնդէր, վար կ'իջնէր Բերայէն, Ոսկեղջիւրի եզերքը քերելով կը յառաջանար դէպ ի Խասգիւղ. հոն, ամայի փողոցներէն բլուրն ի վեր կ'ելնէր և Շահնազարեան վարժարանին դուռը կը զարնէր։ Պ. Ալպերդն էր. ճիշդ դասաժամուն հասած էր։ Աքանչացման աղաղակներով վար կը խուժեն աշակերտք և իրենց ուսերուն վրայ բարձած վեր կը տանին զանի. և Տեսուչը կը ներէ ուսանողաց որ՝ այդ անառակութենէն յետոյ՝ սրահին մէջ անոր ի պատիւ ոտն կատարեն խնդագին։

Եւ Բարթող դծեց յետոյ պատկեր մը որ կը ներկայացուներ Պարոն Ալպերդն, ճիւնով ծածկուած, ցուրտէն կապկապուտ դարձած՝ ձեռքը վարժարանի դրան զանգակին վրայ։ Այդ պատկերն ի տես ուսուցչաց՝ զետեղեցին սրահի ճակատն՝ գեղեցիկ խմբատալից վերտառութեամբ։

Ուրիշ այցելու ուսուցիչ մ'ալ գիւղին քարոզիչն էր. համբերութեան, նեռոդամտութեան անսպառ աղբիւր մ'էր այդ կրօնականին սիրտը։ Որչա՞փ կ'աշխատէր, և սակայն որքա՜ն անհաջող կը լինէր արդիւնքը. բարուց միևնոյն անհարթութիւնները, պատանեկութեան միևնոյն բուռն վարմունքը ցոյց կուտային միշտ շատերն այն ուսանողներէն որք գաւառի ազատ, անմշակ կեանքէն եկած մնած էին յանկարծ դպրոցական կարգի կանոնի տակ, որոց հետ կ'ունենային յաճախակի ընդհարումներ։

Եւ որչա՞փներ կային Պօլսեցի աշակերտներէն որք՝ իբր նոր ժամանակի մարդ՝ ազատամիտ հովեր կ'առնուին. յուսետես, նիւթապաշտ գաղափարաց քարոզ ու պաշտպան կը կանգնէին. բարին օգտակարին հետ կը նոյնացուցնէին, և Աստուածաբանական խնդիրներ կը յուղէին՝ իւր դասի ժամուն։

Իւր ըսելջ տեսութիւններով կը պատասխանէր ամենուն, իւր յամառ յարատևութեամբ ի գործ կը դնէր խմաստուն միջոցներ՝ բարեբարոյ ողջամիտ ընելու համար զանոնք։ Եւ որչա՞փ կ'ուրախանար երբ յաջողէր։

Համբերել ու ներել. այս էր իւր նշանաբանը։

Եւ սակայն համբերութիւնը չէր տաներ մինչև բարոյական ընդարմացման, և ներողամտութիւնը՝ տկարութեան. ի հարկին ունէր արիութիւն՝ դիմել ազդու միջոցներու։ Արդէն իւր ակնարկն ու արտաքին վեհ կերպարանքն ալ խորին ազդեցութիւն մը ունէին շատերուն վրայ։

Այսպէս, ամենէն անուղղայ համարուածներն կը բերէր ուղղութեան։— Ի՞նչպէս, ի՞նչպէս կը յաջողիս, կը հարցունէին անոր ուսուցիչք. դիւթական ի՞նչ հնարք ունիս։ — Ամէն թելադրութիւն սրտէս կ'ընդունիմ, ամէն հընարք սիրոյս կը պարտիմ։ Այս էր ահա իւր պատասխանը։

Այս պատասխանը նոյնպէս պիտի տար վարժարանի ընդհանուր հսկողը, որ մանր ու ջղջուտ մարդ մ'էր, տիպար դաստիարակ մը. նոյն ժամանակի աշակերտք մինչև հիմա, 19–20 տարի ետք, հիացմամբ կը յիշեն զինք։ Ի՞նչ ունէր այս մարդն հիացման արժանի։

Աշակերտք, իրենք ալ, չէին կրնար մեկնել այն ատեն. բայց կ'զգային որ անոր խօսքերէն բան մը կը փոխանցուէր իրենց, էլեկտրական հոսանքի պէս բան մը, ու կը թրթռացուցնէր իրենց հոգին։ Հաղար ու մէկ պարագայից մէջ գործնապէս ցոյց տուած էր նա իւր սէրն առ աշակերտս, որք հետևաբար սերտիւ յարած էին անոր և իրարու հետ կարծես կը մրցէին իրենց փոխադարձ սէրն յայտնելու անոր։

Ուսանողաց մէջ շատեր կային ա՛յնքան յաղթ ու կորովի որ կրնային կանուղ հացի պէս բոլորել զանի ու դըրպանել. բայց ի՜նչ մեծ ու զօրաւոր էր ինքն ալ իւր բարոյական ազդեցութեամբ որ՝ ղօրեղ գորովալիր հոգւոյ

ծնունդ՝ հեզասահ սիւքի պէս կը տարածուէր ամէնուն վրայ, փոքրերուն, ինչպէս և մեծերուն։

Զբօսանքի պահուն այցելու մը դիժուարաւ կրնար որոշել թէ ո՛րն է աշակերտ և ո՛րն է դաստիարակ, որ անոնց հետ կը խաղար կ'զբօսնուր՝ պահելով իւր հեղինակութիւն նոյն իսկ այն սանձարձակ ժամուն։ Ցարդանաց աւելի՛ քան երկիւղի առարկայ էր։ Այո՛, կը վախնային աշակերտք. բայց... միմիայն՝ անոր սիրտը ցաւցուցնելէ։ Նորեկ աշակերտ մը ընդդիմարանած էր նմա վեսութեամբ։ Բոլոր աշակերտք նոյն օրը արհամարհանքի տակ խոնարհեցուցին նորեկը, որ վերջապէս անզգայ չը կրցաւ մնալ դաստիարակին բնաւորութեան հանդէպ, մանաւանդ երբ ականատես եղաւ անոր անձնուիրական մէկ արիութեան։

Տեսչին բացակայութեան, երեկոյ մը՝ ընթրեաց ժամուն, առկախ կանթեղ մը պայթած, քարիւղը բռնկած ու թափած էր տախտակամածին վրայ. լուրը դիմացի անէն բերած էին։ Ցուզում, չփոթութիւն ճաշարանին մէջ. մէկ սաստով կը զսպէ զամէնքը և ինքն սպասաւորաց հետ կը վազէ. անոնցմէ առաջ բոցերուն մէջ կը նետուի։ Ժամէ մը ետք վտանգն անցած էր։

* * *

Զ.

Այսպիսի եռանդուն, ճշդապահ, համբերող ու սիրող անձանց մէջ էր որ կը զարգանար մեր մանկավարժուն։ Անոնց ամէնուն լուսանկարները կը հաւաքէր, ձեռագիրները կը պահէր, հըմայեկի պէս վրան կը կրէր զանոնք։

Իւր պատանեկան սիրտը կը բորբոքէր. վարժարանին շրջանակը նեղ կ'ըզդար այլ և ս. անհամբեր կ'սպասէր նշանակելի աւուր։ Եկաւ այդ օրն որ փառապանծ օր մը եղաւ իրեն համար։ Պատկերու, փունջերու անվերջանալի ընծայմանց, ծափերու երկարատև հարմանց մէջ՝ ստացաւ Ա. վկայական։

Խնամակալք ալ տուին նմա մասնաւոր յանձնարարականներ. սոնց և իւր վկայականին շնորհիւ շուտով պաշտօն գտաւ Իւսկիւտարի ճեմարանին մէջ։

* * *

Է.

Իւսկիւտարը չա՜տ հրապոյր ազդեց իրեն։

Ս. Կարապետ եկեղեցւոյ փառաւոր շէնքն իւր պարտէզով ու աղբիւրով, ճեմարանին խարխուլ վիճակը, աշակերտաց կէս ասիական, կէս եւրոպական բարքերը և բնութեան գեղեցիկ տեսարանները կը յիշեցուցնէին նմա իւր բնագաւառը. խումբ մը ջուլհակ հայրենակիցներ ալ կ'աշխատէին հոն ոստայնանկի գործատան մը մէջ։

Եւ այս ամէն պարագայք զուգորդութեամբ կը կազմէին տրտմանոյշ համանուագ մը որ վաղեմի օրերու անաւրատ յիշատակները կը յուզէր ու կը թնդացուցնէր սաստկութեամբ՝ նորընծայ Մանկավարժին քնքոյշ հոգւոյն ի խոր։ Բայց այդ յուզում, հեռի զանի ընդարմացուցնելէ՝ աւելի ևս կ'արծարծէր անոր եռանդն իւր սուրբ գործոյն համար։

Պաշտօնին մէջ ցոյց կուտար այն ամէն ընտիր հանգամանքներ զորս Շահնազարեան վարժարանին մէջ սերտեր ընդօրինակեր էր իւր ընտրագոյն վարժապետաց վրայէն։

Այն ժամանակներն էին դեռ երբ մէն մի վարժարան իւր յատուկ ծրագրով կը վարուէր, և երբ փոքր տղոց կրթութիւնը բարձի թողի եղած էր։

Ճեմարանի Հոգաբարձութիւնը՝ որոյ անդամներէն ոմանք ժիր և ոմանք լուսամիտ էին բաւական, որոշած էր վարժարանին տալ հիմնական վերակազմութիւն։

Բարթողը քիչ շատ յարմար գտան իրենց այդ նպատակի գործադրութեան։ Զորս հինգ օգնականներով անոր յանձնեցին նախապատրաստական կարգերը։ Բարթող շատ գոհ մնաց։

Ծրագիր մը՝ որոյ մէջ վայլեցուցած էր նա իւր մանկավարժական սկզբունքները, ներկայացուց Հոգաբարձութեան ի վաւերացումն։

Հոգաբարձութիւնը այդ ծրագրոյ քննութենէն իսկ արդէն խորին հաւատք մը ունեցաւ Բարթողի կարողութեան վրայ։ Գրեթէ առանց փոփոխութեան վաւերացուց զայն։

Երեք տարի գործելով, իւր ծրագրոյն մէկ շրջանը յաջողութեամբ բոլորեց։ Վերջի տարին շատ խոնջեալ զգաց ինքզինքը. ո՞ւր կրնար աւելի լաւ կ'ազդուրուիլ քան իւր ծնողաց գիրկը, իրենց աւանին ջրաղացի առուին եզերքը, արտասուաթոր ուռենեաց տակ, կամ թթենեաց պարտէզներու դալարեաց վրայ։

Այն տարին ուրեմն հայրենիք գընաց արձակուրդն անցուցանելու։

(Շարունակելի) Գ. Ա. ՄԱԼԱԹԵԱՆ

Այրածի դեղ. — Զիթաիւղով հաւկիթ մը զարկէք ամանի մը մէջ, մինչև այն աստիճան որ խառնուրդը բարձրանայ. յետոյ այրածքին վրայ դրէք այս պատրաստութենէն օրը բազմիցս։ Այսպէսով վէրքին սպիներն իսկ կ'անհետանան հիմնովին, որքան ալ ծանր լինի արկածն,

---

47) ՇԷՅՔՍՊԻՐ

—

ՎԵՆԵՏԿՈՅ ՎԱՃԱՌԱԿԱՆԸ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

ՀԱՆԴԷՍ Դ.

ՏԵՍԻԼ Ա.

Դուքս. — Պէլլարիօն իւր այս նամակով կը յանձնարարէ երիտասարդ և գիտուն փաստաբան մը։ Ո՞ւր է։

Նէրիսա. — Դուրսը ձեր պատասխանին կ'սպասէ։ Կարո՞ղ է ներկայանալ։

Դուքսը. — Ի բոլոր սրտէ։ Ձեր մէջէն երեք չորս հոգի թո՛ղ երթան զինք ներս հրաւիրելու ամենայն քաղաքավարութեամբ. իսկ այդ միջոցին ատեանը պէտք է լսէ Պէլլարիօի նամակն։ (Բարտուղար մը կը կարդայ նամակը։)

«Ձերդ Մեծապայծառութեան պատիւ ունիմ յայտնել թէ ձեր նամակն ստացած պահուս շատ հիւանդ եմ. բայց ձեր թղթաբերն եկած միջոցին՝ Հռոմէն հասնող երիտասարդ փաստաբան մը այցելած էր ինձ բարեկամաբար և որոյ անունն է Պաղտասար։ Վահառական Անթոնիոի և Հրէին միջև ծագած դատը նմա տեղեկացուցի. իւր հետ շատ մը հեղինակութիւններ քննեցինք, նա ալ իմ կարծիքն ունի այս խնդրոյ նկատմամբ և առաւել զարգացած հմտութեամբ, որոյ խորութիւնը ամէն գովեստէ վեր է. ուստի իմ թախանձանօք իմ կողմանէ կուգայ պատասխանելու Ձերդ Մեծապայծառութեան աղերսագրոյն. կը խնդրեմ՝ նկատելով իւր դեռատի հասակն՝ չզլանաք նմա պատշաճ յարգանքն, զի երբէք տեսած չեմ այսչափ ծեր գլուխ մը այնչափ երիտասարդ մարմնոյ վրայ։ Ձեր սիրալիր ընդունելութեան կը յանձնարարեմ զինքն, որոյ տալիք փորձն առաւել պիտի աճեցնեն իւր արժանիք քան իմ խօսքեր։»

Դուքսը. — Կը լսէ՞ք ի՞նչ կը գրէ գիտուն Պէլլարիօն։ Բայց ահա՛ կարծեմ ինքը փաստաբանն է որ ներս կը մտնէ։

(Կը մտնէ Բոռսիա փաստաբանի հագուստով)։

Դուքսը. — Տուէք ձեր ձեռքն. ծերուկ Պելլարիօի կողմէ կուգա՞ք։

Բոռսիա. — Այո՛, Տէր իմ։

Դուքսը. — Բարի եկաք։ Հրամմեցէք նստէք։ Տեղեկութիւն քաղա՞ծ էք տեղի ունենալիք դատավարութեան մասին յառաջի ատենիս։

Բոռս. — Բոլորովին տեղեակ եմ դատին։ Ո՞րն է հոս Վահառականը և ո՞րն է Հրեայն։

Դուքսը. — Անթոնիո և դու ծեր Շայլօք, երկուքդ ալ յառաջ եկէք։

Բոru. — Ձեր անունը Շայլօ՞ք է։

Շայլ. — Շայլօք է անունս։

Բոru. — Ձեր պահանջը տարօրինակ բնութիւն մը ունի, և սակայն այնչափ օրինական, որ Վենետիկեան օրէնքը չէ կարող արգելուլ զձեզ դատավարելէ։ (Անթոնիոին) վտանգի մէջ էք դուք, այնպէ՞ս է։

Անթ. — Այո՛, այդպէս կ'ըսէ։

Բոru. — Դո՞ւք ստորագրած էք այս մուրհակը։

Անթ. — Այո՛։

Բոru. — Ուրեմն Հրեայն գթած պէտք է լինի։

Շայլ. — Գո՞ւթ, բայց ի՞նչու համար, ըսէք տեսնեմ։

Բոru. — Գթութեան համար անծանօթ է հակառակութիւնն։ Նա կը թափի՝ ինչպէս երկնից ցօղ անուշիկ անձրեւն իւր ներքեւ գտնուող մարդայ վրայ. նա երկնից օրհնեալ է, կ'օրհնէ թէ՛ տուողն և թէ՛ ստացողն։ Ամենակարողն է նա յամենակարողին։ Գթութիւնն առաւել վայելուչ է գահանիստ արքային քան իւր պսակն. իւր գաւազանը կրնայ ցոյց տալ անձաւոր իշխանութեան մը զօրութիւնը, վեհափառութեան յարգն ու մեծարանքն. այդ գաւազանի մէջ է թագաւորաց ազգած ահն ու պատկառանք. բայց գթութիւնը գաւազանական զօրութենէն աւելի զօրաւոր է. իւր գահն թագաւորաց սրտին մէջ է, Աստուծոյ ստորոգելին է. և երկրաւոր զօրութիւնն ըստ կարի կը մերձեցնէ Աստուծոյն, երբ գթութիւնը կը մեղմէ արդարութիւնը։ Հետեւաբար, Հրեայ, թէև արդարութիւնը քու կողմը լինի, բայց ի նկատ ա՛ռ որ ոչ ոք ի մէնջ արդարութեամբ փրկութիւն կը գտնէ։ Մենք աղօթելու ժամանակ մերթ գթութիւն կը խնդրենք Աստուծմէ, և այդ աղօթքը մեզ պէտք է ուսուցանէ գթած լինել։ Եթէ երկար խօսեցայ, միայն մեղմելու համար է պահանջմանդ իրաւունքը։ Եթէ անյողդողդ կը մնաս դիտաւորութեանդ մէջ, Վենետկոյ դատարանն, հաւատարիմ օրինաց, պարտի անտարակոյս վճռել ատ ներկայ եղող վճռականին դէմ։

Շայլ. — Մեղքը վիզս, ես արդար դատաստան կը պահանջեմ, պատժական օրինաց տրամադրութիւնը և մուրհակիս մէջ նշանակուած տուգանքը։

Բոru. — Միթէ կարող չէ՞ վճարել։

Պաս. — Այո՛, ահա՛ առաջի տեսնի կը հատուցանեմ իրեն ալ աւելի։ գումարին կրկինը կուտամ. եթէ այս ալ չբաւէ, կը խոստանամ ասոր անգամը վճարել՝ գրաւի դնելով գլուխս, ձեռքերս, սիրտս. եթէ այս ևս չբաւէ, յայտնի կ'երևի որ չարութիւնը կ'ուզէ յաղթութիւն տանիլ ազնուութեան վրայ։ Կը թախանձեմ որ այս մի անգամի համար խոնարհեցնէք օրէնքը ձեր իշխանութեան. ըրէք փոքր չարիք մը՝ մեծ բարիք մը գործելու համար, և կորացուցէք այս դժոխային ճիւաղի յամառութիւնը։

Բոru. — Այդ չէ կարելի. չկայ զօրութիւն մի ի Վենետիկ կարենալ փոխելու հաստատեալ օրինագիր մը։ Այս օրինակ ընթացք մը անթիւ օրինազանցութեանց պատճառ կը լինի երկրին մէջ. այդ չէ կարելի։

Շայլ. — Դանիէլ մը եկած է զմեզ դատելու, այո՛, Դանիէլ մը. ո՜հ, իմաստուն դեռատի դատաւոր, որչա՜փ կը յարգեմ զքեզ։

Բոru. — Խնդրեմ ցոյց տուէք ինձ մուրհակն։

Շայլ. — Ահաւասիկ, մեծայարգ վարատարան, ահաւասիկ։

Բոru. — Շայլօք, պահանջիդ եռապատիկը կ'ուզեն վճարել քեզ։

Շայլ. — Երդում, երդում, երդում ըրած եմ. կ'ուզէ՞ք որ երդմնազանցութեամբ հոգիս սուցնեմ. ո՛չ, չեմ կարող երդմնազանց ըլլալ, եթէ Վենետիկն իսկ ինձ պարգեւեն։

Բոru. — Այո՛, մուրհակին ժամանակն անցեր է առանց վճարուելու, և մուրհակի պարունակութեան համաձայն, Հրեայն կրնայ ըստ օրինի պահանջել լիար մը միս որ վաճառականին ճիշդ սրտին մօտն կտրելու իրաւունքն ունի։ Կարեկցատ եղիր, Հրեայ, ընդունէ պահանջիդ եռապատիկն և պատռեմ մուրհակը։

Շայլ. — Այո՛, պիտի պատռեմ, երբ հատուցուի ինձ ինչ որ պիտի ստանամ ըստ պայմանին։ Կ'երևի որ արժանընտիր դատաւոր մ'էք, կը ճանչէք օրէնքըն, զձեզ շատ նշանաւոր մէկը ներկայացուցին, ուրեմն պարտք կը դնեմ ձեր վրայ յանուն օրինաց, որոյ լաւագոյնս ուսուցչապետն մին էք, տալ վճիռը. ահա՛ հոգիս վկայ, չկայ ճարտարագոյն լեզու մը մարդկային որ կարենայ փոխել մտադրութիւնս։ Կը պահանջեմ ինչ որ մուրհակիս համաձայն ինձ կը պատկանի։

Անթ. — Ի բոլոր սրտէ կը խնդրեմ դատարանէս տալ վճիռն։

Բոru. — Լաւ ուրեմն, պատրաստէ կուրծքդ իւր դանակին։

Շայլ. — Ո՞վ ազնիւ դատաւոր, ո՜վ գերազանց երիտասարդ։

Բոru. — Արդարեւ օրինաց իմաստին ու նպատակին համաձայն են մուրհակին մէջ նշանակուած տուգանքը. իրաւունք ունիս պահանջել զայն։

Շայլ. — Շատ ճշմարիտ է, ո՜վ իմաստուն և արդարամիտ դատաւոր. դու շատ աւելի տարիքոտ պէտք է լինիս ինչ որ դէմքդ ցոյց չտար։

Բոru. — Ուրեմն, Անթոնիո, բացէք ձեր կուրծքը։

Շայլ. — Այո՛, կուրծքը, այդպէս կ'ըսէ մուրհակը, այնպէս չէ՞, ազնիւ դատաւոր, իւր սրտին մերձաւորագոյն մասը. նոյն իսկ մուրհակին բառերն են։

Բոru. — Այո՛, նոյն իսկ բառերն։ Բայց արդեօք կշիռ մը կա՞ յ հոս՝ կշռելու համար միսը։

Շայլ. — Այո՛, հատ մը ունիմ պատրաստ։

Բոru. — Շայլօ՛ք, վիրաբոյժ մը հետ բերի՞ր քու ծախքով, որպէս զի վէրքը կապէ, եթէ ոչ՝ արիւնը կրնայ մահացու լինելու ստիճան հոսիլ։

Շայլ. — Մուրհակին մէջ յիշուած է այդ։

Բոru. — Յիշուած չէ, բայց վնաս չը կայ, դուք լաւ է որ կարեկցութեամբ գործէք։

Շայլ. — Չեմ հասկնար ինչո՞ւ, ատիկայ մուրհակին մէջ չկայ։

Թարգմ. Ա. ՀԱՄԲԱՐԴԱԲԹԱՆ
(Շարունակելի)

Ներքոյս Անտրիասեան

ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ

Ի Պոլիս, Սուլթան Պայազիտ,

Քէօքճիլէր պաշը, թիւ 99

Լուսանկարչատանս մէջ կը պատրաստուին ամէն տեսակ լուսանկարներ՝ Եւրոպայէ նոր հասած բազմաթիւ նորահնար գործիներով։ Պ. Ն. ԱՆՏՐԻՕ. ՄԷՆՕ ինքն անձամբ կը հանէ իւր բազմաթիւ յաճախորդաց պատկերները։ Յաճախորդներն կատարելապէս գոհացընելու համար, յանձնարարուած լուսանկարներու ՕՐԻՆԱԿը ցոյց կը տրուի նախապէս, և եթէ չհաւնուի, կրկին և կրկին անգամ կը լուսանկարուի, մինչև որ հաւնուի. զիջողութիւն մը զոր մայրաքաղաքիս ո՛չ մի լուսանկարիչ յանձն կ'առնու։ Կ'ազդարարեմք մեր բազմաթիւ յաճախորդաց որ, ինչպէս յատակ և պայծառ օրեր, նոյնպէս և ամպոտ և մառախլապատ օրեր լուսանկարք կը հանուին ամենայն յաջողակութեամբ՝ շնորհիւ նոր գիւտերու։

Կը խնդրուի զգուշանալ կարգ մը նորելուկ լուսանկարիչներէ որք կը գործեն մեր անուամբ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պաշտօնաթերթիւնք։— *Սուրիոյ Բաշիա գաւառակին գայմագամ անուանեցաւ Մուսթաֆա պէյ, գայմագամ Տօմայի։— Տօմայի գայմագամ անուանեցաւ Միւհէյատին պէյ, գայմագամ Պասրկէնարիրի, և իրեն յաջորդեց Մուսթաֆա Հիլմի էֆէնտի, նախկին շրջանաւարտ Միւքիյէ վարժարանին։— Կարճկանի գայմագամ անուանեցաւ Մուսթաֆա էֆէնտի, գայմագամ Արճիշի, և իրեն յաջորդեց Մէհմէտ Ալի էֆէնտի, գայմագամ Կարճկանի։— Գանտիայի նախնական դատարանին պատժական ճիւղին նախագահ անուանեցաւ Հագգը պէյ, անդամ վերաքննիչ ատենին։— Բէթիմոյի պատժական դատարանին նախագահ անուանեցաւ Պէլալ էֆէնտի, նախագահ նախնական դատարանին Հանեայի։— Հանեայի նախնական դատարանին նախագահ անուանեցաւ Մէհմէտ պէյ, անդամ վերաքննիչ ատենին։— Բեգրսալուրկի Օսմ. հիւպատոս անուանեցաւ Նապի պէյ, Դ. քարտուղար Օսմ. դեսպանատան Աթէնքի, և իրեն յաջորդեց արտաքին թղթակցութեանց դիւանի քարտուղարներէն Մէհմէտ պէյ։— Հալէպի Բաղարճըք գաւառակին գայմագամ անուանեցաւ Մէհմէտ էֆէնտի։— Արշիպելագոսի կղզեաց նահանգին Իբտարա գաւառակին գայմագամ անուանեցաւ Երուանդ էֆ. Մարգարեան, նախկին շրջանաւարտ Միւքիյէ վարժարանին։— Ատանայի, նահանգին Էվգաֆի հաշուակալ կարգուած է Ալի Բիզա էֆէնտի, Էվգաֆի հաշուակալ Պասրայի։— Տարտանելի մաքսատան տնօրէն անուանուած է Հիւսէյին էֆէնտի, նախորդ տնօրէն մաքսատան Ռոտոսթոյի, և իրեն յաջորդած է Ղալիպ պէյ, նախորդ տնօրէն մաքսատան Հայտար Փաշայի։*

Ասիճանք.— *Սանիյէի Բ. աստիճան տրուեցաւ Տէնիզլիի թաղապետական բժիշկ Ահմէտ Շաքիր էֆէնտիի։— Սալիսէի աստիճան՝ Տիարպէքիրի հեռագրական և թղթատարական տնօրէն Ակեահ էֆէնտիի։—*

Պատուանշան։— *Դ. կարգի Օսմանիյէ պատուանշան տրուեցաւ Հայտէրանը Աշիրէթէն Մէհմէտ Սատըգ պէյի։— Գ. կարգի Մէճիտիյէ՝ Դարաբաբաք ցեղէն Հաճի Իսա աղայի, Շէմսէքի Աշիրէթէն Տէրեաղ աղայի, Սէպիքի Աշիրէթէն Ալի Թօրունղատէ Հիւսէյին պէյի, նոյն Աշիրէթէն Ալի աղայի և Շիուլի Աշիրէթէն Հաճի Ալի աղայի։— Իմթիազի ոսկի և արծաթ շքաղրամները տրուեցան Տէհրանի Օսմանեան դեսպան Նուսուհի պէյի։— Դ. կարգի Մէճիտիյէ՝ Այտընի Ուրլա գաւառակին գայմագամ Հասան Խուլուսի պէյի։— Ե. կարգի Մէճիտիյէ՝ Ատանայի կրթական տնօրէն Համմի էֆէնտիի։*

— Բաղէշի Պիւհթան անուն տեղէն՝ սովի և թանկութեան պատճառաւ՝ շրջակայ գաւառները գաղթող բնակիչք սկսեր են մաս առ մաս իրենց տեղերը վերադառնալ։ Յարդ 71 անուորք դարձեր են։

— Ամասիոյ Նախպ Աթաուլլահ էֆէնտին հարցաքննութեան ենթարկուած է՝ իւր նախորդ պաշտօնին մէջ գործած զեղծումներուն համար։

— Դիւանագիտական վարժարանի պիտի յատկանայ Պէշիկթաշի արքունի կալուածոց մէկ մասը, որ արդէն խիստ փառաւոր կերպիւ կահաւորուած և զարդարուած է։

— Վանայ Հէֆֆեարի գաւառին Իմամկէյ ու Մահմուտկէյ գաւառակաց կեդրոններուն մէջ թաղապետական շրջանակներ հաստատուած են։

— Ռոտոսթոյի մէջ գտնուած նախնական երկու վարժարաններէն զատ երրորդ մը եւս բացուած է։

— Մարաշի ու Հալէպի Բաղարճըք գաւառակին մէջ մէկ մէկ նախնական վարժարանք հաստատուած են։

— Ի Պրուսա եւ ի Բէօրանիա էնֆլուէնցա երեւան ելեր է։

— Կրէտէ ներմուծուող ապրանքներէ, յունվ. 15էն սկսեալ, առժամանակեայ թեթեւ տուրք մը կ'առնուի կրթական գործին և հանրօգուտ շինութեանց յատկացուելու համար։— Կղզոյն գաւառակաց մէջ երրորդ կարգի ոստիկաններ կարգելու համար յանձնաժողով մը կազմուած է որ թէ՛ խլամներէ ու թէ՛ քրիստոնեայներէ կարողութիւն ցոյց տուողներն ի պաշտօն պիտի կոչէ յետ քննութեան։

— Պոլսոյ քարտիանց շինութեան համար հարկ եղած քարերը պիտի բերուին Բեաղըսխանէի վրայ գտնուած լեռներէն։

— Ցուցաց Պատրիարքարանի Խառն ժողովը Սինոդի անդամ ընտրեր է Մաղնեսիայի, Նիկոմիդիոյ, Գատըգիւղի, Տէրքոսի, Եանեայի, Միտիլլիի, Տիմոթէոքայի ու Իմպրոզի մետրապոլիտներն։ Էրէյլիի մետրապոլիտ Տ. Եէրմանոս վերընտրուեցաւ։

— Եդեսիոյ բնակիչներէն ու Աշիրէթներէն՝ երկու տարիէ ի վեր՝ Շէմի, Պաքարէ և Ատվան Աշիրէթին պատկանող աւաղակներն 14,000 ոչխար, 500 ուղտ, ևն, գողցած լինելով, զինուորք յաջողեր են ետ առնուլ 10,000 ոչխար, 260 ուղտ և 14 ձի։

— Մենաշնորհ խնդրուած է Պոլսոյ և Բերայի կողմերը սրահներ հաստատել՝ ուր պիտի կատարուին Պոլսոյ Պիթրաքարի մէջ եղած առևտուրք։ Այս սրահներու մէջ փոխատուութիւն եւս պիտի լինի՝ ատանդ տրուած դոյքերու փոխարէն։

— Զիմնուարական պատժական օրինաց տրամադրութեանց համաձայն պիտի պատժուին անոնք որոնք զինուորական վարչութեան պատկանող ապրանքներ կը գնեն՝ գողցուած լինելը գիտնալով։

— Ի Զարեամպա, առաջինը վիրաւորեալ և երկրորդը մեռած ձերբակալուեր են Զարչամպայի Մինաս օղլու Յովհաննէս ու Սեբաստայի Պաղատասար անուն աւաղակներն, որոնք երկայն ժամանակէ ի վեր Ճանիկի ու Սեբաստիոյ կողմերն ասպատակելով, այլ և այլ չարիքներ կը գործէին։

— Ադիւսի տուրքը կշիռի տրոց վարչութեան պիտի յանձնուի յառաջիկայ Մարտ ամսէն սկսեալ։

— Արհեստաւորաց տուրքն յառաջիկայ Մարտ ամսէն սկսեալ պիտի դանձուի Բաղաքապետութեան մէջ կայմեալ արհեստաւորաց յատուկ դիւանին ձեռամբ։

— Կալուածատուրք վճարելու անկարող աղքատաց, այրիներու ու որբերու բնակարանաց տուրքերու փոխարէն, ի գաւառս՝ իւրաքանչիւր տեղւոյ կալուածատրոց համեմատութեամբ տարեկան գումար մը յատկացուած է, և այս գումար՝ կալուածահամարի գործողութեան կատարուած թուականէն ցայսօր 1,782,000 ղրուշի հասած է։ Այս գումարէն 782,000 ղրուշ խնայուելով, 1307 տարւոյ ելմտացուցին մէջ 1 միլիոն ղրուշ նշանակուած է. և այսպէս այդ գումար իւրաքանչիւր տեղւոյ համար նոյն տարիէն սկսեալ ըստ այնմ բարեփոխուած և բաշխուած է։ Իսկ մայրաքաղաքիս ու արուարձանաց մէջ աղքատաց տուրքին փոխարէն գումար մը յատկացուած չլինելով, աղքատաց սեփական 5,000 ղրուշէ վար արժէք ունեցող բնակարանաց ու գեղիներու կալուածական տուրքը չէր գանձուեր։ Այժմ գումար մ'ալ, 34,000 ղրուշ, յատկացուած է աղքատաց տուրքին փոխարէն. հետեւաբար աղքատաց սեփական 5,000 ղրուշէ վար արժէք ունեցող բնակարանաց կալուածատուրքերը սոյն գումարէն պիտի վճարուին։

— Գատրգիւղի եւ Հայտար փաշայի միջեւ 40,000 մէթր տարածութեամբ նաւահանգիստ մը շինելու և այդ նաւահանգստին մէկ կողէն միւսը քարափ մը շինելու արտօնութիւն խնդրած է՝ Պոլսոյ քարափանց արտօնատէր Միշէլ փաշա։

— Մախսուսէի վարչութիւնն որոշած է այսուհետեւ ապահովագրել իւր շոգենաւներ ընդդէմ ծովային արկածից։

— Գեղարուեստից վարժարանի այս տարուոյ շրջանաւարտներէն Բիֆա պէյ՝ առաջին, Բանայօթ էֆէնտի՝ երկրորդ, և Թովմաս, Բիֆաթ, Անտոն ու Անպէրեան Օննիկ էֆէնտիք երրորդ կարգի վկայական ստացած են։

— Պրուսայի Տէֆթէրտար Բաղըպ պէյ մայրաքաղաքս եկաւ։

— Մայրաքաղաքիս աղքատաց ածուխ բաշխուելու համար Վեհ. Սուլթանը այս տարի եւս 1000 ոսկի շնորհած է։

— 723 այր եւ 687 կին մեռեր են ի Կ. Պոլիս՝ դեկտեմբեր ամսոյ միջոցին։

— Պոլսի ընդհանուր դատախազին նկատմամբ ձեռնհաս իշխանութեան բողոքներ է։

— Ոսիկանութիւնը՝ Թուրքիայէն արտաքսեալ հելլենահպատակ վնասակար անձանց դարձն արգիլելու համար՝ անոնց անուններն ու նկարագիրը պարունակող ցուցակ մը պատրաստած ու մատուցած է Ներքին գործոց նախարարութեան, որպէս զի հաղորդուին Օսմ. հիւպատոսներու։

— Բուլէյիի երկաթուղեաց վիճակահանութեան առաջին պարգեւը՝ 300,000 ֆրանք՝ շահեր է ի Խասգիւղ աղիւսի գործարանատիրոջ մը մավուանցիներէն Վանեցի Մուրատ։ Երկրորդ պարգեւը՝ 25,000 ֆրանք՝ շահեր է ի Ճիպալի Բէժիի գործարանին գործաւորներէն Քօչօ և իւր կինը Սօֆի, որոնք բաղդատոմս մը միայն գնած էին։ Իսկ Պոլսոյ մաքսատան գապգիմաներէն Գարա Եուվան օղլու անուն անձը փոքր գումար մը շահեր է։ Արապկիրցի Գավուկճեան Ստեփան և Գարակիւլեան Աւետիս անուն անձինք, ընկերութեամբ տոմսակ մը գնած լինելով, շահեր են երրորդ պարգեւը՝ 10,000 ֆրանք։

— Քէօքահեայի մօտ ձերբակալուեր են Հապիլ Բէհլիվանի աւազակախումբէն երկու աւազակներ՝ Գարա Ապտի ու Զաքմաք Էօմէր, որք Պրուսայի կողմերը փախած էին։

— Էսկիշէհիրի մէջ եւս էնֆլուէնցան երեւցեր է։

— Աֆեայի բերդը ղրկուեցան եօթը բանտարկեալք։

— Սելանիկէն ընդ հակողութեամբ մայրաքաղաքս ղրկուեր է՝ Մախսուսէի վարչութեան տեղւոյն գործակալութեան քարտուղար Ալի էֆէնտի, անվայել լեզու մը գործածելուն համար։

— Սելանիկի ջուրի ընկերութիւնն իւր աշխատութիւններն սկսած է Վարտար-Քաբուսիէն դուրս գտնուող գետնին վրայ զոր կառավարութիւնն իրեն թոյլատրած է։ Այդ գետնին վրայ արդէն ջրհորներ պիտի բացուին։ Այս շինութեանց համար պէտք եղած նիւթոց մաքս չէ առնուած։

— Իւսֆիւպ-Սելանիկի երկաթուղւոյ գծին վրայ այս օրերս մի քանի չարագործք խոշոր փայտ մը դրեր են՝ կառախումբը գծէն հանելու համար։ բարեբաղդաբար մեքենավարը ժամանակին նշմարելով, որ և է արկած չէ պատահեր։

— Ի Սամսուն, ջրօրհնէնքի տօնի օրը՝ խաչը ծովը նետուած պահուն՝ թէև թեթեւ կռիւ մը ծագեր է ժողովրդեան մէջ, բայց առաջքը շուտով առնուեր է։

— Այտընի նահանգին Իտարէի ժողովոյ աւջև պիտի դատուի Սէրայքէօյ գաւառակին գայմագամ Նամիք էֆէնտի։

— Պէլկրաս ուղևորեցաւ իւր տիկնոջ հետ՝ Սերպիոյ Օսմ. դեսպանատան Ա. քարտուղար Մարգարեան էֆէնտի, որ իւր ամուսնութեան առթիւ արձակուրդով մայրաքաղաքս կը գտնուէր։

— Կէլիպոլուի գաւառին շրջակայ Ամէապատ գիւղախումբը իւր ընդարձակութեան և դրից կարևորութեան պատճառաւ Գ. աստիճանի գայմագամութեան պիտի վերածուի յառաջիկայ մարտէն սկսեալ։

— Ի Զմիւռնիա 750 դրչ ամսաթուշակաւ լեզուագէտ պաշտօնեայ մը պիտի կարգուի, քննելու համար այդ քաղաքը ներմուծուող օտար գրքերու և հանդէսներու, ինչպէս և տեղւոյն մէջ տպագրեալ զանազան լեզուներով գրքերու պարունակութիւնը։

— Ատանայի, Բաղէշի եւ Խարբերդի նահանգաց համար ընտրեալ ոստիկանք ի մօտոյ իրենց պաշտօնավայրերը պիտի ղրկուին։

— Ցէտիրնէ, էնֆլուէնցային պատճառաւ, կառավարութիւնն որոշեր է որ վարժարանաց մէջ դասախօսութիւնք ժամը 5էն մինչև 9 տեղի ունենան։

— Լէյլէի Բէղաիպի տօնին առթիւ, հինգշաբթի օր արձակուեցան իրենց պատժոյն երեք քառորդը լրացնող 38 բանտարկեալք։ Վեհ. Սուլթանին հրամանաւ, գաւառներն եւս հեռագրուած է իրենց պատժոյն երեք քառորդը լրացնող բանտարկեալներն արձակել։ Նոյն տօնին առթիւ Բ. Դրան մէջ տասնական ղրուշ բաշխուեցաւ 500 է աւելի աղքատաց։

— Վանայ նոր կուսակալ Պահրի փաշա իւր պաշտօնատեղին ուղեւորեցաւ։

— Զպատուաստուած տղաքներ վարժարանաց մէջ չընդունիլ հրամայուած է Կրթական նախարարութենէն։

— Խարբերդի նահանգին համար ընտրուեցան ոստիկանութեան երկու գոմիսէրներ և չորս ոստիկաններ, բաղէշի համար՝ երկու գոմիսէրներ ու հինգ ոստիկաններ։ Ատանայի համար եւս պէտք եղած թուով ոստիկանք ընտրուած են։ Այս ոստիկանք ի մօտոյ պիտի ուղևորին իրենց պաշտօնատեղիները։

— Հայ-Հռովմէականաց Պատրիարքարանի Փոխանորդ Գերապայծառ Արսլանեան և Պատրիարքարանի քարտուղար Ամէմեան Ներսէս վարդապետ Պիլէճիկ երթալով, կարգադրեր են Նոր տոմարի գործածութեան առթիւ ծագած անհամաձայնութեան խնդիրը։

— Պոլսոյ Ապահովութեան Ընտուկի հիմնադիր և գանձապետ Յովհաննէս էֆ. Փափազեան՝ իւր իսկ խնդրանօք հանգստեան կոչուեր է։

— Խարբերդի կառավարական պաշտօնական շէնքին վերի յարկէն անցեալ երեքշաբթի օր հրդեհ ծագելով, ամբողջ շէնքն՝ վերի յարկը գտնուած դատական պաշտօնատունով հանդերձ՝ այրեր է։ Պաշտօնական գրութեանց մէկ մասն ազատեր է։

— Մամուրէթ-իւլ-Ազիզի նահանգին տրոց կեդրոնական քարտուղար Մուսթաֆա էֆէնտին և Մըսրլեան Գրիգոր և Ներկարար Էղիկ անուն անձինք՝ տեղւոյն պատժական ատենին առջև հրապարակաւ դատուելով, իրենց ոճրագործութիւնն հաստատուեր և մահուան դատապարտուեր են։

Նոյն կուսակալութենէն խնդիրը տեղեկագրուած է Արդարութեան գործոց նախարարութեան։

ԲԺԻՇԿ Կ'ՈՒԶՈՒԻ

Ծովեզերեայ գաւառէ մը ճարտար բժիշկ մը կը փնտռուի։ Պայմաններն իմանալու համար դիմել «Ծաղիկ»ի Խմբագրատունը։

ԱՐԺԷՔ ԴՐԱՄՈՑ

Օսմ. լիրան 100 դրչ. էն

Մէճիտիէ	108	17	Վէցնոց	102	20
Քառորդ մէճիտ	107	20	Ռուսիոյ բօշ	89	20
Մանր մէճիտ	102		Նաբոլէոն	87	7
Մէթալիք	98	20	Գրիվից	51	10
Հինգնոց	101	30	Անգղ. լիրա	109	28

Մանէթ թղթագրամ 9 27

Գոնսոլիտէ	20		Ռումմ. երկ.	68 1/2
Թահվիլ. Օսմ.	75		Թասվիյէ	21

22)

ՄԵՌԵԱԼ ԿԻՆԸ

Եւ, իւր իդական շնորհօքը և այտիցը վրայ փոսիկներ ձեւացնող հիանալի ժպտովն աւելցուց.

— Եւ յետոյ, բարեկամդ իմ, մայրութիւնը կ'աւերէ գեղեցկութիւնը, և քանի որ դուք գեղեցիկ կը դանէք զիս, կ'ուզեմ գեղեցիկ մնալ։

Եւ արդարեւ իւր գեղեցկութիւնը մնացած է անայլայլելի, բայց պատճառներ ունիմ երկնչելու թէ այդ գեղեցկութիւն միմիայն իմ պատուոյս և փառաց համար պահուած լինի։ Առաւելքան երբէք որոշած լինելով աշխարհիս ամէն բաներն հաճոյօրէն տեսնել, զուարթօրէն պիտի շարունակեմ խօսիլ այս նիւթիս վրայ, որքան ալ փափուկ լինի այն։

Մեր մեղրալուսնոյ ճամբորդութենէն անմիջապէս յետոյ, որոյ միջոցին պարտիմ խոստովանիլ թէ Սապինի շնաշխարհիկ և զօրեղ բանականութիւնը բուռն գոհունակութիւն պատճառած էր ինձ, եկանք հաստատուիլ ի Բարիզ, ուր վերստին մուտ գործելուս համար շատ երջանիկ կ'ղդայի զանձս։ Բայց կը վախնայի թէ մի գուցէ կինս ըսկ ինձ հաճելի լինելու համար հոն եկած լինէր հետս, և թէ մի գուցէ դժուարաւ ընտելանար բարիզեան կենաց որուամ անպատրաստ լինելու էր իւր առանձնակեաց և լուրջ կենցաղը։ Այս նկատմամբ, անակնկալ երևոյթի մը առջեւ գտնուեցայ որ ինձ խիստ հաճոյ թուեցաւ ի սկզբան։ Սապին բարիզեան միջավայրը մոռած էր որպէս իրեն խիստ ընտանի շրջանակի մը մէջ։ Մինչեւ իսկ դիտեցի, ոչ շատ ուշ, թէ այդ կենաց մէջ նա ցոյց կուտար փոքր ինչ չափազանց եռանդ, զոր ինքնին չկրցայ չբաղդատել մոլեգնութեանն՝ վանքէն խոյս տուող կուսի մը որ մեծաբերան կը խածնէ երկայն ժամանակէ ի վեր ցանկացեալ և երկայն ժամանակէ ի վեր արգիլեալ պտուղ մը։ Ցիշեցի յայնժամ, — գուցէ մի քիչ ուշ, — թէ ի՛նչ արտասովոր հետաքրքրութեամբ օրիորդ Թալըվօ կը հարցափորձէր զիս երբեմն, անտառաց մէջ մեր շրջագայութեանց միջոցին, Բարիզու բնակչաց հաճոյից և ըզբօսանացը մասին։ Նա այժմ իւր հաշուոյն կը վայելէր այդ հաճոյքներն և զբօսանքներն և այն աստիճան որ կարծես սպառել կը ջանար զայնս։ Հացկերոյթ, պարահանդէս, թատրոն, ձիարշաւ, ընտանեկան կատակերգութիւնք, ամէն տեսակ աշխարհային հանդէսք,— վերջապէս բարիզեան կենաց այն ամէն առիթներն որք կրնան շահագրգռել միտքը, զգայարանքները կամ սնապարծութիւնը, Սապին կը փընտռէր զայնս նոյն անխոնջ ցանկութեամբ, և այդ ամենուն կը հաճէր և տակաւին կը հաճի։ Իւր այս հակումը ռամիկ բարիզուհւոյ մը յիմար հակումը չէ, այլ դրական որոշում մ'է ճանաչելու և ճաշակելու, քանի կ'ապրի այս մոլորակին վրայ, ամէն ախորժելի և հետաքրքրելի զգայութիւն, որոշում՝ զոր հաստատ կը բռնեն պողպատեայ ջիղեր և երկաթեայ կամք մը։ Կինս Սիլինքս մ'է։ Միանգամայն յիշատակարան մ'է, յիշատակարան զոր առաջին օրէն սկսայ ուսումնասիրել հետաքրքրութեամբ մը որ, — ճիշդն ըսելով,— զերծ չէր միշտ մտատանջութենէ։ Քանզի դիտած էի որ այս զարմանալի կինը, ուսումն ու գիտութենէն՝ իւր ազնիւ և դժբաղդ պաշտպանին նման՝ փոխանակ ներշնչուելու տեսակ մը գերագոյն հաւատքով և բարձր խորհուրդով, դառն բացատրութիւններ միայն քաղած էր անոնցմէ, բնական կամ գերբնական ամէն խոչնդոտի, աստուածային կամ մարդկեղէն ամէն կարգի օրինաց դէմ արհամարհանաց և ապստամբութեան խորին զգացմամբ մը։ Կը հարցնէի իւրովի թէ ի՞նչ պիտի լիներ, իւր անսանձ տրամաբանութեան մէջ, այս կանացի կիրքն՝ ազատ թողուած աշխարհիս ընթացքին մէջ։ Կը հարցնէի իւրովի թէ ուր վերջ պիտի գտնէր այս անյագ հետաքրքրութիւնը...։ Կը հարցընէի մանաւանդ թէ արդեօք՝ սիրոյ մասին՝ այդ հետաքրքրութիւն պիտի գոհանա՞ր ինձմով։

Կինս, կանխելով փափաքս, ինքն իսկ ուզեց պատասխանել հարցմանս։

Խնդիրը բացուեցաւ աննշան դէպքի մ'առթիւ։ Ներկայացում մը յայտարարուած էր որոյ մէջ Սառա Պեռնառ կարեւոր դեր մ'ունէր։ Կինս՝ որ այս օրինակ հանդիսից և ոչ մէկէն բացակայ կը մնայ, ըստ իւր սովորութեան յանձնարարած էր ինձ՝ անպատճառ օթեակ մը վարձել իրեն։ Զը կրցայ վարձել։ Կը խոստովանիմ թէ անտիպոթ գտնուած էի վարձելու։ Կինս տիւ և գիշեր այնպիսի կեանք մը կը վարէ որ տարտամ տաղտկութիւն մը կ'սկսէի զգալ, վաղեմի կենցաղասէր և քնաշրջիկ մը լինելով հանդերձ։ Բժիշկս խորհուրդ կուտար ինձ մինչեւ անգամ փոքր ինչ չափաւորել կենաց այս անհանդարտ եղանակը։ Ուրեմն ցաւ չէի զգացած գիշեր մը տանս մէջ մնալուս համար, մանաւանդ կնոջս հետ, որուն զարմանալի գեղեցկութիւնը, հակառակ իւր խառնուածքին,—դուցէ, աւա՜ղ, այդ խառնուածքին պատճառաւ— չէր դադրած երեւակայութեանս ուժգին խօսելէ։

Ճաշէն վերջ, որոյ միջոցին դժգոհ և լուռ ձեւ մ'առաւ, ընկերացայ իրեն մինչեւ իւր առանձնատեղեակը, ուր հուրը կը ճարճատէր տարփածուի մը հրոյն նման, և շնորհալից կերպով գլանիկ մը ներկայացնելով իրեն.

— Սիրելիս, այս երեկոյ տեղ մը չպիտի երթա՞ք, ըսի։

— Ո՞ւր կ'ուզէք որ երթամ։ Ամբողջ Բարիզ այս ներկայացման գացած է, բաց ի մեզմէ։

— Լաւ ուրեմն, պատասխանեցի, ես չեմ նախանձիր ամբողջ Բարիզի վրայ, բայց ամբողջ Բարիզ պէտք է նախանձի իմ վրաս, քանի որ ձեր մօտն եմ այս պահուս։

Իւր երկար աթոռին վրայ նետուած էր. կէս մը շտկուեցաւ, և իւր ամենացուրտ և ամենասուր հայեցուածքով չափելով զիս,

— Ներեցէք, բարեկամս, ըսաւ ինձ, միթէ տակաւին կը սիրէ՞ք զիս։

Եւ երբ, իբրև պատասխան, մեծ մեծ բացի աչերս,

— Իրա՞ւ կը սիրէք, յարեց. շատ զարմանալի է... իմ մասին, ես ա՛լ ուրս չեմ սիրեր զձեզ։

Եւ իւր երկար աթոռին վրայ հանդարտօրէն երկննալով, աւելցուց.

— Զայս կ'ըսեմ ձեզ, բարեկամս, քանզի ժամանակէ մը ի վեր կը նշմարեմ որ սկսած էք նախանձոտ լինիլ, և կ'ուզեմ այս ծաղրալի վիճակէն ազատել զձեզ...։ Բաց ասա՛ի, կը տեսնեմ որ ճանձրոյթ կ'զգաք ամենուրեք ստուերիս նըման ինձ ընկերանալով... ինձ կը թուի մինչեւ անգամ որ ձեր առողջութիւնն ալ կը վնասուի այդու։ Այժմ այս անկեղծ յայտարարութենէն յետոյ, պիտի կարողանաք երթալ հանգստանալ մի քիչ։

— Շնորհակալ եմ ձեր բարեսրտութենէն, ըսի իրեն։ Բայց հաճեցէք աւելի յստակօրէն բացատրել ձեր միտքը...։ Արդեօք ըսել կ'ուզէ՞ք թէ այս վայրկեանէս սկսեալ պարտիմ հրաժարիլ ձեզ հաճոյ լինելու պատուէն։

— Ո՛հ, խնդրեմ։

— Եւ թէ, դրժե՞լ մտադիր էք այն հաւատարմութիւնը զոր կը պարտիք ինձ։

—Հաւատարմութի՞ւն զոր կը պարտիմ ձեզ։ Ի՞նչ հիման վրայ, բարեկամս։ Այն երդմա՞ն համար զոր երկուքս ալ ըրինք տաճարին առջեւ Աստուծոյ մը որուն ոչ ես կը հաւատամ, ոչ դուք...։ Է՜հ, տղայ չէք դուք, և քանի գիտէք թէ այդ օրը ձեւակերպութիւն մը միայն կատարեցինք պատշաճութեան համար ...։ Ընկերութիւնը, մինչեւ ցնոր անօ-

րինութիւն, ամուսնացեալ զանոնք միայն կը նկատէ որոնք այդ ձեւակերպութիւնը կատարած են... Այս պայմանաւ է միայն որ նա կը պատուէ զայնս, տեղ մը կը շնորհէ նոցա՝ սրահներու մէջ, և դասաւորութիւն մը՝ աշխարհի մէջ...։ Պէտք էր մեզ ուրեմն համակերպիլ այդ ձեւակերպութեան... բայց, արդէն, տեսնենք, բարեկամս, ի՞նչ է ամուսնութիւնը ձեզ և ինձ նման անձանց միջեւ։ Քաջ գիտէք թէ պարզ ընկերակցութիւն մ'է այն՝ այնպիսի առաւելութեանց տեսակէտով որ մեր երկուքին համար են միանգամայն... ընկերակցութիւն որ անշուշտ փոխադարձ հրապուրով մը կ'սկսի երբեմն, բայց որ կարող չէ հիմնուած լինել՝ մի և նոյն անձին մի և նոյն կնոջ համար և մի և նոյն կնոջ մի և նոյն անձին համար յաւիտենական սիրոյ հակաբնական անհեթեթութեան վրայ։

— Սիրելի Սապինս, ըսի, կարելի բան չէ ձանձրանալ ձեզ հետ։ Երբ մարդ՝ ինձ նման՝ տարիքը կ'առնու, երբեմն գիշերները կ'ուզէ մրափել վառարանին քով...։ Ասիկայ անպատշաճ բան մ'է ուրիշ պիտի զգուշանամ անշուշտ ցորչափ զիս պատուէք ձեր զուարթացուցիչ խօսակցութեամբ։

— Շնորհակալ եմ ձեզ, սիրելի Պեռնառս, պատասխանեց ինձ, խօսքերս զուարթօրէն ընելուդ համար...։ Եթէ ձեր տեղը յիմար մը լինէր, պիտի վշտանար... անշուշտ...։ Կը խոստովանիմ, այսու հանդերձ, թէ խօսելու ձեւին մէջ քիչ մը խիստ եղայ... բայց կատղած էի սոյն ներկայացման ներկայ չգտնուելուս համար...։ Ի՞նչու տեղի տուիք այդպիսի խօսակցութեան մը։

— Այսպէս, սիրելիս, պարտիմ իբրև ծաղրաբանութիւն նկատել ինչ որ այս երեկոյ ինձ ըսելու և իմացնելու պատիւն ունեցաք։

— Բայց ո՛չ, բարեկամս, ամենեւին... ըսածներէս բան մը ետ չեմ առնուր. միայն կը խոստովանիմ որ բարկանալս աւելորդ էր...։ Ապա թէ ո՛չ, քաջ կ'ըմբռնէք թէ ճշմարտութիւնը միայն յայտնեցի ձեզ, և թէ ամուսնութիւնը մեզ համար պարտի լինել ինչ որ էր վերջի դարուս ազատախոհ անձանց համար, պատկառելի դրօշակ մը որոյ հովանւոյն ներքեւ ամէն ոք իւր անկախութիւնը կը պահէ...։ Բարեկամ եմք մեք և կը յուսամ թէ միշտ այնպէս պիտի մնամք... բայց սիրահա՞ր... մի՞շտ...։ Մի թէ բնակա՞ն է այս... մի թէ կարե՞լի է... քաջ գիտէք թէ ո՛չ...։ Ուրեմն ի՞նչ... կ'ուզէ՞ք որ զիրար խաբեմք գձուձ թագնասիրութիւններով...։ Ո՛չ, մէկ պայման միայն կար արդարեւ որ մեր երկուքին համար ալ բանաւոր և պատուաբեր լինի, այն է շարունակել վայելելու այն առաւելութիւնները զորս ամուսնութիւնը կ'ապահովցնէ մեզ աշխարհային կենաց մէջ, և միանգամայն օգտուիլ փոխադարձ ազատութեան մը հաճոյքներէն...։ Կը տեսնէք, բարեկամս, կենաց ճշմարիտ տեսութիւնն է ընկերութեան հետ վարուիլ այնպէս ինչպէս կը վարուինք բնութեան հետ, այսինքն օգուտ քաղել նորա մեզ ընծայած առաւելութիւններէն, մերժելով հանդերձ այն ծառայութիւնները զորս մեր վրայ պարտ դնել կը յաւակնի։

— Սիրելի կինս, պատասխանեցի, ստամոքսիս մասին ձեր ունեցած կարծիքը քիչ մը չափազանց է, երբ կարող կը կարծէք զայն ամբողջ քսան և չորս ժամ մարսելու՝ բնութեան և իւր ծառայութեանց վրայ ձեր ունեցած տեսութիւնները...։ Ես շատ պարզ մարդ մ'եմ՝ կարենալ մաքառելու համար ընդդէմ վարդապետութեանց որք հիմնուած են խորին ուսումնասիրութեանց վրայ...։ Ահա ասոր համար թոյլտուութիւն կը խնդրեմ ի ձէնջ ձեր ձեռները համբուրելու և գիշեր բարի մաղթելու։

Սենեակս քաշուեցայ։ — Կրնամ ըսել կարծեմ թէ իմ այս կերպով հեռանալս, տագնապալի կացութեան մը մէջ, ոչ անպատշաճ էր ինձ համար և ո՛չ արժանապատուութեանս հակառակ։ Բայց այդ մասին գոռոզ ալ չեմ։

Ահա այս էր մեր յարաբերութեանց եղանակը սոյն սխրալի գիշերուան միջոցին, և անկից ի վեր այնպէս կը շարունակուի։ Մեր երկուքին մէջ կը տիրէ այժմ խուլ թշնամութիւն մը, և կրնայ ըսուիլ նորածին ատելութիւն մը որ առաւել կամ նուազ կը ծածկուի սիրուն հեգնութեան մը ձեւերուն ներքեւ։ Մեր երկուքին կենակցութիւնը սակայն տակաւին չէ դարձած անտանելի, շնորհիւ աշխարհային զբօսանաց որք խիստ կը կարձեն կենակցութեան վայրկեանները։ Ինչ որ ալ լինի, բացայայտ ճշմարտութիւն մը կայ այժմ, սա թէ երկրորդ ամուսնութիւնս կ'սպառնայ առաջնոյն չափ դժբաղդ լինել, գուցէ առաւել ևս...։ Բայց այս անգամ բարեբաստիկ մխիթարութիւն մը կ'զգամ, քանի որ դէմս ունիմ հակառակորդ մը որ կրնայ զինքը պաշտպանել. այս անգամ գործս այնպիսի արարածի մը հետ չէ որ, լինելով յանչափս զգայուն և փափկասիրտ, անգութ զգամ զանձս նոյն իսկ վշտացնելու համար զինքը։ Քանի որ ըսուած է թէ ամուսնութիւնը ճակատագրային պատերազմ մ'է, մարդ պարտի բարեբաստիկ համարիլ զանձն՝ երբ ճակատամարտը տեղի կ'ունենայ հաւասար զէնքերով։ Այս վիճակը տանելի է...։ Երջանիկ վիճակ մը չէ այս, ճշմարիտ է, բայց կեանք է վերջապէս։

30 Mars.

Երէկ երեկոյ լաւ զբօսնեցայ...։ Բայց կարգաւ պատմեմ։

Կնոջս այնքան բացորոշ յայտարարութիւններէն յետոյ, պարտաւորեցայ սպասել որ օր մը վերջապէս պիտի մարտնչէի ո՛չ թէ կենաց, ա՛յլ պատուոյ համար։ Շատ փորձեցի ինքզինքս համոզել, որպէս կինս յայտարարած էր ինձ, թէ մեր վերջին դարու սիրելի նախնիք ճշմարտութեան շաւղին մէջ էին երբ փոխադարձ ազատութեամբ կը շարժէին և նոյն իսկ իրենց ամուսնական անմտութիւնները միմեանց կը վստահէին։ Թէև զերծ շատ մը նախապաշարումներէ, չեմ կարող սակայն ինքզինքս բարձրաձնել իմաստասիրութեան այս աստիճանին։ Կը խոստովանիմ թէ՝ ուղիղ տրամաբանութեամբ՝ կինս իրաւունք ունի ամուսնութեան մասին իւր տեսութեանց մէջ։ Իրաւունք ունի ըսելու թէ մի և նոյն անձին միակ և մշտնջենական սէրը մի և նոյն կնոջ համար, և փոխադարձաբար, հակաբնական անհեթեթութիւն մ'է։ Ստոյգ է թէ հոգեկրօնական դաւանութիւնք միայն կրնան մշտնջենաւորել լծակցական հաւատարմութիւնը, վասն զի նոքա ամուսնութեան մէջ միայն երկու մարմնոց և երկու մտքերու վաղանցուկ հրապոյրը չեն նուիրագործեր, այլ և կը միացնեն երկու անմահ հոգիներ։ Ստոյգ է նաև թէ երկու ճշմարիտ նիւթապաշտներու միջեւ, ինչպէս եմք կինս և ես, ամուսնութիւնը, կորսնցնելով իւր կրօնական հիմը, լոկ ընկերական միութիւն մը կը լինի ա՛լ եւս, և թէ ուղղամտութիւնը կը պահանջէ որ այր և կին բարեկամաբար միաբանին, վայելելու համար այդ միութեան ընծայած առաւելութիւնները և ի բաց վանելու համար բռնադատութիւնները։ Այո՛, կատարելապէս գիտական է այս ամէնը։ Բայց պէտք է ընդունիլ թէ գիտութեան ամէն միջոցները չեն կարող գործադրելի լինիլ աշխարհիս ամէն իրաց և ի մասնաւորի բարոյական իրաց համար...։ Գալով ինձ՝, կը խոստովանիմ որ տասնեհինգ օրէ ի վեր՝ շնորհիւ ըստ ինքեան՝ համոզուած էի թէ կնոջս տեսութիւններն օրինաւոր էին, թէ՝ նորա նման ես ևս պարտէի ցոյց տալ կենաց մասին բարձր խորհուրդ մը, ընդունելով փոխադարձ անկախութեան դաշինքը զոր առաջարկած էր ինձ։ Բայց, երբ բերանս կը բանայի որոշումս հաղորդելու համար իրեն, բառերը կոկորդիս մէջ կը խեղդուէին, քանզի հակառակ բովանդակ աշխարհի ընդունած արտամաբանութեան, զգացի թէ խիստ վատ գործ մը պիտի ընէի։ Արդարև կան մի քանի նախապաշարմունք որոցմէ երբէք չպիտի կրնամ ազատիլ, և ինչ ինչ նկատմամբք տկարամիտ պիտի մնամ։

(Շարունակելի)

ՐՈՒՄԷԼԻԻ ԵՐԿԱԹՈՒՂԵԱՑ

132ՐԴ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

20 Յունուար Ն. Տ. 1892

Oblig. N°	Primes Frs	Oblig. N°	Primes Frs	Oblig. N°	Primes Frs	Oblig. N°	Primes Frs	Oblig. N°	Primes Frs
1619567	300,000	820370	1,250	82256	1,250	1947475	1,000	406768	1,000
21452	25,000	519604	»	677373	»	759864	»	635079	»
1059640	10,000	665479	»	88160	1,000	21093	»	820368	»
315517	»	1259150	»	205597	»	434426	»	767350	»
868214	2,000	880133	»	545516	»	1216166	»	1251358	»
275605	»	21455	»	270709	»	1098157	»	561871	»
487703	»	218215	»	870459	»	82260	»	1947472	»
223141	»	1858864	»	138309	»	283120	»	240674	»
1041098	»	868212	»	1799765	»	561874	»	1098288	»
547736	»	347151	»	1098156	»	665476	»	1092165	»

400ական չահող թիւերը

15316	90332	205599	255162	434429	662476	841358	936732	1212168	1454286	1690387
15317	90333	205600	255163	434430	662477	841359	936733	1212169	1454287	1690388
15318	90334	218211	255164	483556	662478	841360	936734	1212170	1454288	1690389
15319	90335	218212	255165	483557	662479	857691	936735	1216167	1454289	1690390
15320	91036	218213	268946	483558	662480	857692	950736	1216168	1454290	1708371
21091	91037	218214	268947	483559	665477	857693	950737	1216169	1486551	1708372
21092	91038	223142	268948	483560	665478	857694	950738	1216170	1486552	1708373
21094	91039	223143	268949	487701	665480	857695	950739	1221796	1486553	1708374
21095	91040	223144	268950	487702	677371	868211	950740	1221797	1486554	1708375
21451	122651	223145	270706	487704	677372	868213	954441	1221798	1486555	1732481
21453	122652	223306	270707	487705	677374	868215	954442	1221799	1524006	1732482
21454	122653	223307	270708	519601	677375	870456	954443	1221800	1524007	1732483
62616	122654	223308	270710	519602	678436	870457	954444	1227401	1524008	1732484
62617	122655	223309	275601	519603	678437	870458	954445	1227402	1524009	1732485
62618	138306	223310	275602	519605	678438	870460	982276	1227403	1524010	1735961
62619	138307	228461	275603	536761	678439	875486	982277	1227404	1560346	1735962
62620	138308	228462	275604	536762	678440	875487	982278	1227405	1560347	1735963
66776	138310	228463	283116	536763	695846	875488	982279	1251356	1560348	1735964
66777	139981	228464	283117	536764	695847	875489	982280	1251357	1560349	1735965
66778	139982	228465	283118	536765	695848	875490	1041096	1251359	1560350	1799761
66779	139983	233751	283119	545517	695849	880131	1041097	1251360	1583611	1799762
66780	139984	233752	311751	545518	695850	880132	1041099	1259146	1583612	1799763
69871	139985	233753	311752	545519	749991	880134	1041100	1259147	1583613	1799764
69872	153716	233754	311753	545520	749992	880135	1059636	1259148	1583614	1833031
69873	153717	233755	311754	547737	749993	885891	1059637	1259149	1583615	1833032
69874	153718	237971	311755	547738	749994	885892	1059638	1288076	1616986	1833033
69875	153719	237972	315516	547739	749995	885893	1059639	1288077	1616987	1833034
70706	153720	237973	315518	547740	759861	885894	1092161	1288078	1616988	1833035
70707	156461	237974	315519	561872	759862	885895	1092162	1288079	1616989	1849506
70708	156462	237975	315520	561873	759863	902361	1092163	1288080	1616990	1849507
70709	156463	240671	318906	561875	759865	902362	1092164	1293156	1619566	1849508
70710	156464	240672	318907	584431	763951	902363	1092216	1293157	1619568	1849509
79616	156465	240673	318908	584432	763952	902364	1092217	1293158	1619569	1849510
79617	167571	240675	318909	584433	763953	902365	1092218	1293159	1619570	1858861
79618	167572	247531	318910	584434	763954	908706	1092219	1293160	1632961	1858862
79619	167573	247532	332531	584435	763955	908707	1092220	1368491	1632962	1858863
79620	167574	247533	332532	602381	767346	908708	1098158	1368492	1632963	1858865
81921	167575	247534	332533	602382	767347	908709	1098159	1368493	1632964	1947471
81922	190346	247535	332534	602383	767348	908710	1098160	1368494	1632965	1947473
81923	190347	249476	332535	602384	767349	920401	1098286	1368495	1635971	1947474
81924	190348	249477	347152	602385	806151	920402	1098287	1380296	1635972	1972586
81925	190349	249478	347153	624346	806152	920403	1098289	1380297	1635973	1972587
82257	190350	249479	347154	624347	806153	920404	1098290	1380298	1635974	1972588
82258	192986	249480	347155	624348	806154	920405	1161306	1380299	1635975	1972589
82259	192987	252541	406766	624349	806155	929756	1161307	1380300	1636501	1972590
88156	192988	252542	406767	624350	820366	929757	1161308	1409141	1636502	1972686
88157	192989	252543	406769	635076	820367	929758	1161309	1409142	1636503	1972687
88158	192990	252544	406770	635077	820369	929759	1161310	1409143	1636504	1972688
88159	205596	252545	434427	635078	841356	929760	1212166	1409144	1636505	1972689
90331	205598	255161	434428	635080	841357	936731	1212167	1409145	1690386	1972690

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԳԱՇԵՆԱԿԱՑ

ԵՐՈՒԱՆԴ ՅԱԿՈԲԵԱՆ

Վկայեալ դաշնակայարդար ԷՌԱՌԻ հռչակաւոր գործատան

—

Գնումն եւ վաճառումն

Փոխանակութիւն հին դաշնակաց հետ

—

Կը վաճառուին ամէն տեսակ դաշնակներ ամնական վճարմամբ և մասնաւորաբար Գաղղիոյ լաւագոյն գործարաններէն Բլէնի դաշնակները, խիստ դիւրամատչելի գիներով։ Մասնաւոր յանձնարարութեամբ ամէն գործարանաց դաշնակներէն կը բերուին։

—

Վարձու նոր դաշնակներ չափաւոր գիներով։
Բաժանորդագրութիւն դաշնակաց յարդարման (accord)։

—

Դաշնակաց նորոգութիւն, գաղղիական ընտիր նիւթերէններով։

ՀՐԱՀԱՆԳ դաշնակները չհինցնելու և լաւագոյն վիճակի մէջ պահելու։

Գաւառներէ եղած յանձնարարութիւնք ամենայն խնամով և փութով կը կատարուին։

Անմրցելի աժանութիւն

Աւելի մանրամասնութեանց համար դիմել Բերա, Մեծ-Փողոց, Ղալաթա Սարայի դիմաց, Խրիսթաքի խան, Թիւ 10։ (15—30)

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԵԱՑ

133ՐԴ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ

տեղի պիտի ունենայ յառաջիկայ Մարտի 19ին։ Մեծ պարգեւն է,

300,000 ֆրանք

Գին բաղդատումի 7 ½ ղրուշ։

Գաւառներէն ստանալ փափագողք կարող են դիմել «Ծաղիկի» Յանձնակատարութեան Գրասենեակին, տոմսակի գնոյն հետ ղրկելով 40 փարա աւելի՝ փոստի ծախուց համար։ Գրասենեակը պատասխանատուութիւն չստանձներ, եթէ պատահի որ ղրկուած նամակը ճանբան մոլորի և տիրոջը ձեռքը չը հասնի։ Տոմսակն ապահովագրեալ նամակով ստանալու համար, պէտք է 40 փարայի տեղ 90 փարա աւելի ղրկել։

ԱՐՏՕՆԱՏԻՐ Ա. ՍԱՓԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ
Էսկի-Զապթիէ փողոց, թիւ 61

ՖԱՆԷԼԱ ԱՊՐԱՆԱՑ ՀԻՒՍԱՐԱՆ ԵՒ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԱՍԼԱՆԵԱՆ ԵՂԲԱՐՑ

Ի Մահմուտ փաշա, Ֆիւրքճի խան, Թիւ 26 եւ 15, որոյ մասնաճիւղն է ի Պահչէ—Գաբու, Մաքսատան կարգ, Թիւ 44 Թօհաֆիյէի վաճառատունը։

Թէ՛ մեծ եւ թէ՛ փոքր քանակութեամբ՝ արանց, կանանց և տղայոց համար՝ անխառն բրդէ, մանածէ, եւայլն, ուզուած թանձրութեամբ և ուզուած չափով յանձնարարութիւնք կ'ընդունուին ու պատրաստ կը ծախուին Ֆանէլա շապիկներ, վարտիքներ, միսօցուներ, եւայլն։ Ապրանքները կը մրցին եւրոպական ներուն հետ թէ՛ աժանութեամբ, թէ՛ դիմացկունութեամբ և թէ՛ իրենց նուրբ ճաշակով։ Ցաճախորդք ամէն կերպիւ գոհ պիտի մնան։

12—24

Մոռրատեան Մկրտիչ եւ Յովհաննէս

եղբարց վաճառատունք

ԵՐԿԱԹԻ, ԽՈՒՐՏԱՎԱԹԻ, ԳՈՐԾԵԱՑ ԵՒ ԱՑԼՈՑ

Կ. Պոլիս, Ալաճա Համամ, Թիւ 44 եւ Ղալաթիա, Բէրշէմպէ բազար,

Մահմուտիյէ—Ճատտէսի, Թիւ 70 եւ 59։

Անգղիական, գաղղիական և ամերիկեան կարեւոր գործարանաց մէջ պատրաստեալ զանազան տեսակ երկաթեղէնք, ռուսական կախիչաղակք (սամ քիլիտի), հիւսան (տիւլկէր) գործիներ, եկեղեցական զանգակք, խարտոցք, զինկոյէ սամաններ, գործարանաց վերաբերեալ մեքենայք, երկրագործական բազմազան գործիներ, եւայլն, եւայլն, ամենքն ալ շատ աժան գներով։ Ընկերութեանս մեքենագործն դիւրութիւններ կ'ընծայէ մեքենայից գործածութեան ուսման համար։

Կ. Պոլսէ և գաւառներէ ամէն ուղղակի յանձնարարութիւնք շուտ և կանոնաւոր կը կատարուին։ Մեր քով չգտնուածներն ալ յանձնողէն քով Եւրոպայէ բերել կուտանք և ուզուած տեղերն ու նաւահանգիստները կը փոխադրեմք։

Մեր վաճառատանց վարչութեան հասցէն է՝

Մ. Ց. ՄՈՒՐԱՏԵԱՆ ԵՂԲԱՐՔ

11—24 70, *Եօրկանճըլար ճատտէսի, Ղալաթիա, Կ. Պոլիս*

ԱՆԱՊԱԿ ԳԻՆԻ ԳԱՐԹԱԼԻ

ԽԱՎԵԱՐ—ԽԱՆ, ԹԻՒ 91

Վերջին ժամանակներս գինեշինութեան արդիւնաւորութեան վրայ յաճախ կը գրուին տեղական ազգային և օտարազգի լրագրաց մէջ, և գոհութեամբ կը շեշտուի սոյն ձեռնարկին մասնագէտ համարուող Սուքիասեան Ցակոբ էֆէնտիի անունը, որ իւր երկարամեայ փորձառութեամբն՝ Գարթալի զանազան խաղողներէ՝ ունեցած սեպհական և չրջակայից այգիներէն անձամբ կը պատրաստէ ընտրելագոյն և անարատ գիններ, որոց մէջէն յատուկ գնահատութեան արժանի են՝ ԳԱՐԱ—ՋԱՎՈՒՇ, ՀՕՐԱ, ՀԱՃԻ—ՕՂԼՈՒ, ՔԷՉԻ—ՄԷՄԷՍԻ և ՆՈՒՐՆԻԿԵԱՐ խաղողներէն՝ սեւ գինի, ինչպէս նաև ՄԻՍՔԷԹ—ՋԱՎՈՒՇ, ԳԱՌԱ—ՋԱՎՈՒՇ, ՆՈՒՐՆԻԿԵԱՐ և ԳԱԲՈՒ—ՏԱՂԻ ըսուած խաղողներէն՝ ճերմակ և թէ անոյշ գիններ, որք մայրաքաղաքիս առաջնակարգ բժշկաց կողմէ եւս կը յանձնարարուին ամէն կարգի հիւանդաց։ — կը ծախուին չիշով պատրաստ, նաեւ քաշով և տակառով։ Յատկապէս յանձնարարելի են մեծաճոխ սեղաններու և խրախճանաց հանդէսներու ու շքասեղաններու համար։

13—15